Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1448

20*
Б-43

57

ԱԿԱՆ ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ՄԷՋ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

—

Աշխատասիրեալ

Ի ԳԷՈՐԳԱՑ ԱՒԵՏԵԱՆ ԶԱՔԱՐԵԱՆՑ

ՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875

118

ՄԱՐԳԱՐԷԱ ԿԱՆ ՅԱՐԱԿՅՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ՄԷՋ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Աշխատասիրեալ

Ի ԳԷՈՐԳԱՑ ԱՒԵՏԵԱՆ ՋԱՔԱՐԵԱՆՑ

ԵՒ ՎԵՐՆԹԱԵԱԼ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԱԹՈՌՈՅՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

1010
41323

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875

38609 ա.հ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԿ

ԳԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵԳԻԱԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ԳԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Դ. ԳՕԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

22030 ԼՕ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թէ՛ ի հնումն և թէ՛ նորումս բազումք ուրա-
ստուտ լինին զհնութենէ Աստուածաշունչ մատենիս
կամ զլինելոյն նորա սուրբ և աստուածեղէն տառ։
Այլ թէ՛ յետնոց ոմանց ասեն դրեալ այն իբր
աղդային պատմութիւն ինչ, և ըստ քմաց գրողին
լի անհաւատալի այլաբանութեամբ, որով և յա-
ւելակցութիւն նորա ընդ Նոր Կտակարանի՝ յորում
նախաձայնեալ ամենայն օրէնք և մարգարէութիւնք
վերաբերին առ անձն, առ պաշտօն, առ փառս և
պատիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին
ազգի մարդկան, մերժի և ճշմարտութիւն սրբոյ
Աւետարանին ստի։ Քանզի հիմն և նկարագրու-
թիւն Նորոյ Կտակարանի է Հին Կտակարանն,
որ ուրանայ զՀինն, ուրացեալ է և զՆորն։

Բայց Պօսուէ մեծիմաստ Եպիսկոպոսն գնդե-
ցիկս յանդիմանէ զչարաչար դատողն աստուածե-
ղէն մատենիս, յասելն իւրում. «Յայս ամենայն
վերոյ որ արդեօք զարմացուցին զքեզ խարդաւանե-
ցան ամբարիշտք՝ խուսափել կամեցեալ ի նշանացն
և ի մարգարէութենանց։ Այլ մի՛ կարծեսցին և
յԱստուծոյ խուսափել. պահեայ նոցա ի հոգե-
շունչ պատգամն սոյլ աստուածեղէն կնիքք անգծ-
ելի յոսոխայ, այն ինքն է աղխաղխումն երկուց կա-
տակարանաց։ Քանզի անհակառակելի է այս ինչ,
կանխագոյն գոլ Հնոյ Կտակարանի քան զՆոր Կա-
տակարանն։ Զէր ի միջի այլ Եզբաս, որ Նոր յա-
ջինել մատեան և մեզկեցէ զՀրեայս. կամ խարդա-

խել զայն առ 'ի Հնորհուկս քրիստոնէից, զոր հաւատէին։ Զուր է աւելի ինն ասել զայսցանէ, 'ի միաբանութենէ երկուց Կաթողիկոսաց ստուգիւ 'ի վերայ հաստատեալ։ Թէ աստուածեղէն են երկոքեան։ Մի է դիտաւորութիւն երկոցուն նոցա, և մի ուշ ունին նպատակի։ Նա յարդարէ զաւրելոյ կատարելութեան, զոր եկեալ սորա ակն յանդիման ցուցանէ։ Նա արկանէ զհիմն շինութեան, եւ սա դլխաւորէ, և զոր նա կանխաձայնեաց, սա յաւաջ մատուցեալ զկատարումն եցոյց ամենայնիւ։ Վէպք աղգաց Բ. հատոր, երես 225։

Ուստի և ես առ 'ի հաստատութիւն ճշմարիտ գրութեան մեծիմաստ հօրս, և 'ի ստուգութիւն այնորիկ աշխատ կալայ 'ի մի վայր Ժողովել զամենայն մարգարէութիւնսն խօսեցեալս զՔրիստոսէ, որք 'ի ծննդենէ աշխարհի մինչև ցգալուստ նորա գտանին 'ի Սուրբ Գիրս Հնոյ Կտակարանի, ունելով ինձ օգնական զվկայաբանութիւն Ս. Գրոց եւ Հայոց Սրբոց մեր եւս օտար աղգաց, Հարց և Պատասխանի ձեւով, յուսալով զի բաւական լցի այն բառնալ զդայթակղութիւն ուրացողացն զճշմարտութենէ և զչարակցութենէ երկուց աստուածեղէն մատենից։

Գէորգ Աւետեան
Զաքարեանց։

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Հարց. Զի որովհետեւ դլխաւոր առարկայ Նոր Կտակարանի է Տէրն մեր Յիսուս Քրիստոս և Աւետարանն Սուրբ, ասա, ոչք են երեւելի յատկութիւնք կամ հանգամանք անձին Քրիստոսի խօսեցեալ զնմանէ 'ի Հին Կտակարանի անդ։

Պատասխանի. Բաց 'ի յօրինակայ և 'ի խորհրդաւոր նշանաց Քրիստոսի եւ Աւետարանի նորին, որք գտանին 'ի հին օրէնսն 'ի պաշտամունս Եբրայեցւոց, այսինքն սեղան և պաշտօնեայք

նորա, Օրէնք եւ սպասաւորք նորա. Ժողովուրդ և քահանայապետք նորա. պատարագ և զենումն նորա, և այլն. են և պէսպէս յայտնի նկարագրութիւնք, որք են գուշակութիւնք վերաբերեալ առ Քրիստոս Փրկիչն մեր, բազմաք յառաջ քան զգալուստս նորա յաշխարհ 'ի փրկութիւն ազգի մարդկան։

Հ. Զինչ է առաջին գուշակութիւն վասն գալստեան Քրիստոսի։

Պ. Ի Ծննդոց 'ի գլ. Գ. հմ. 15. ուր Աստուած ասէ ցօձն, "Եղից թշնամութիւն 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջդ, և 'ի մէջ զաւակի քոյ և 'ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քումդ գլխոյ. և դու սպասեսցես նորին գարշապարի։

Հ. Ուրանօր կատարեցաւ այս գուշակութիւն։

Պ. Ի Գաղատացւոց 'ի գլ. Դ. հմ. 4. ուր գրէ, "Այլ իբրեւ եկն լրումն ժամանակի առաքեաց Աստուած զՈրդին, որ եղեւ 'ի կնոջէ"։

Եւ 'ի Յովհաննու առաջին 'ի գլ. Գ.

հմ. 8. գրէ, "Որ առնէ զմեղս 'ի սատանայէ է, զի 'ի սկզբանէ սատանայ մեղանչէ, վասն այնորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի"։ Որպէս է և այս բան Պոսիւէ եպիսկոպոսի յասել նորա. "Այլ մինչ ահիւ տագնապեն զմեղ ահաւոր դատաստանք Աստուծոյ, սքանչասցուք՝ զի՞արդ առ նմին յուսախականն հայեցուցանէ 'ի վեր զմիտս. և անդըստին յօրէ կորստեան մերոյ յայտ յանդիման ցուցանէ զհանդերձեալն մեր ապատութիւն։ Օձիւն, որ բազմապատիկ սողոսկելովն տպաւորագոյնս նկարէր զվնասակար հրապոյրս և զպատրողական հնարս այսոյն չարի, յայտառնէ Աստուած նախամօրն Եւայի և զնոգկալի նկարագիր զարժանին պատուհաս ասելի նորա պատրելոյ։ Հարկ 'ի վերայ կայր օձին ատելի լինել ամենայն կենդանեաց. զոր օրինակ և սատանայ անիծապարտ եր քան զամենայն արարածս. և որպէս 'ի վերայ լանջայ և որովայնի իւրոյ քարշի օձ ընդ երկիր, և սատանայ իրաւապէս թօթա-

փեալ յերկնից, ուր ստեղծեալն էր, ոչ եւս վերականգնեսցի։

Հոգ ուտել ասացաւ օձին 'ի նշաւակ վայրաքարշ խորհրդոց, զորս ազգ 'ի մեզ սատանայ. և իւր իսկ խորհուրդք ամենայն երկրաքարշք են. զի ոչ այլ ինչ խորհի նա, բայց միայն ըզ մեզս։ Յանհաշտ թշնամութեան անգ մարդկայինս ազգի ընդ սատանայի ակն յայտնի տեսանեմք զյաղթանակն որ մեզ պահեալ կայ։ Զի ահաւասիկ աւետարանի մեզ Զաւակ Օրհնեալ, որով ջախեսցի գլուխ պատրողին, սանձակոծեսցի ասեմ ամբարտաւանութիւն նորա, և խայտառակեսցի թագաւորութիւն նորա ընդ ամենայն երկիր։ Զաւակն օրհնեալ է կուսածինն Քրիստոս, յորում միայն չմեղաւ Ադամ. քանզի եւ աստուածահրաշ օրինակաւ ծագեաց յԱդամայ, յղանալով ոչ 'ի մարդկանէ, այլ 'ի Հոգւոյն Սրբոյ։ Ապա սովին չնաչխարհիկ զաւակաւ, կամ թէ 'ի ձեռն կնոջն՝ որ զնոյն ծնաւ, որպէս ունին աստանօր ընթերցուածք զանազանութիւս, հանդերձեալ էր նորոգել զեղծեալ ազգ մարդկան, և բառնալ զզօրութիւն իշխանի աշխարհիս, որ յիւրոյն ինչ ոչ եգիտ 'ի Քրիստոս։ Վէպք ազգայ Ս. հատոր, երես 253. և որ կնի նորին։

Հ. Զինչ է յետագայ յայտնի գուշակութիւն վասն Քրիստոսի։

Պ. Ի Ծննդոց գլ. ԺԸ. հմ. 18. և ԻԲ. հմ. 18. ուր ասէ Աստուած. «Այլ Աբրահամ լինելով լինիցի ազգ մեծ և 'ի բազում, և օրհնեսցին 'ի նա ամենայն ազգ երկրի»։ Եւ եւս «Եւ օրհնեսցին 'ի զաւակի քում ամենայն ազգ երկրի, փոխանակ զի լուար ձայնի իմում»։

Հ. Որով երեւի թէ այս խոստացեալ զաւակն է Քրիստոս։

Ի Գաղ. 'ի գլ. Գ. հմ. 8. գրի. «Յառաջագոյն գիտէր գիր, թէ 'ի հաւատոց անտի արդարացուցանէ Աստուած զհեթանոսս. յառաջագոյն խոսեցաւ Աբրահամու. թէ 'ի քեզ օրհնեսցին ամենայն ազգ»։ Դարձեալ 'ի նոյն 'ի հմ. 16. ասի՝ «Իսկ Աբրահամու խոստացան աւետիքն, եւ զաւ-

ւակի նորա. և ոչ ասէ զզաւակաց իբ-
րեւ զբազմաց, այլ իբրեւ զմիոյ. թէ
և զաւակի քումի, որ է Քրիստոս »։

Եւ 'ի Մատթ. 'ի Ծննդաբանու-
թեան Քրիստոսի գրի, «Գիրք ծննդեան
Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի,
որդւոյ Աբրահամու ». Ա. 7։

Զնոյն է տեսանել և յայս պանծալի
բան Պօսիւէի յասելն նորա վասն
խոստման Աստուծոյն 'ի զաւակի Աբ-
րահամու օրհնեալն ամենայն ազգանց.
այսինքն՝ խոստանայ Աստուած Աբրա-
համու 'ի նմա և 'ի զաւակի նորա,
օրհնիլ ամենայն ազգանց. զի ամենայն
ազգ և ազգինք՝ որ կուրացեալ մոռա-
նային զԱրարիչ իւրեանց, նուաւ կո-
չեսցին յԱստուածգիտութիւն՝ յորում
տիրապէս և օրհնութիւն։ Սոյաւ հայր
կարգեցաւ Աբրահամ ամենայն հա-
ւատացելոց և զաւակ նորա աղբիւր
օրհնութեան, որ արբուցանելոց էր
զամենայն տիեզերս։

Աւասիկ շառաւիղն օրհնութեան
խոստացեալ Եսայեայ, նոյն եւ ուղէշ
և շառաւիղ Աբրահամու։ Վէսլիք ազ-

գաց Ա. հատոր, երես 272։

Հ. Բաց 'ի յԱբրահամու այլ ոչ մի
եւս Աստուած զնոստումն գալստեան
Քրիստոսի։

Պ. Սահակայ որդւոյ Աբրահամու,
ըստ այնմ թէ՝ « Եւ բազմացուցից ըզ-
զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից.
եւ տացի զաւակի քումի ամենայն երկիր
սոյս. և օրհնեսցին 'ի զաւակի
քումի ամենայն ազգք երկրի։ Ի Ծնն-
դոց ԻԶ. 4։

Զնոյն ասէ Աստուած և Յակոբայ
որդւոյ Իսահակայ. « Եւ եղիցի զաւակ
քո ասէ, իբրեւ զաւազ երկրի. և ընդ-
դարձակեսցի ընդ ծովակողմն և ընդ
արեւելս. և ընդ հիւսիս և ընդ հա-
րաւ. եւ օրհնեսցին 'ի քեզ ամենայն
ազգք երկրի և 'ի զաւակի քումի »։ Ի
Ծննդոց 'ի գլ. ԻԸ. հմ. 14։

Հ. Մարգարէացաւ և Յակոբ որ-
դի Իսահակայ վասն գալստեան Քրիս-
տոսի։

Պ. Այ, զի 'ի ժամ մահուան իւ-
րոյ խօսեցաւ ընդ որդւոյ իւրում Յու-
դայի և ասէ. «Մի պակասեսցի իշխան

'ի Յուդայ. և մի պետ յերանաց նորա. մինչեւ եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթանոսաց»։ Ի Ծննդոց 'ի գլ. խթ. հմ. 10։

Հ. ԶիաՀրդ իմանաս թէ այս մարգարէութիւն կամ օրհնութիւն Յակոբու առ որդի իւր Յուդա է նախադուշակութիւն վասն գալստեան Քրիստոսի։

Պ. Նախ՝ զի յասելն թէ, մինչեւ եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց, յայտնապէս նշանակէ զՔրիստոս, որ առաքեցաւ 'ի հօրէ 'ի փրկութիւն հեթանոսաց, ըստ այնմ թէ. «Իսկ զոր հայր սրբեաց եւ առաքեաց յաշխարհ, դուք ասէք թէ հայհոյեա»։ Յովհ. ժ. 36։ Դարձեալ թէ. «Որպէս զկս առաքեաց յաշխարհ, և ես առաքեցից զնոսա յաշխարհ։ Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ. զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։ Ոչ զոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւ նոցա յիս։ Զի ամենեքեան մի լցեն, որպէս դու Հայր յիս. և ես 'ի քեզ. զի և նոքա 'ի մեզ լցեն. զի եւ աշխարհ հաւատասցէ, թէ դու առաքեցեր զիս»։ ԺԷ. 8—21։ Երկրորդ՝ որ ասի. մի պակասեսցի իշխանութիւն 'ի Յուդայ, և մի պետութիւն յերանաց նորա, մինչեւ եկեսցէ նա. նշանակէ տեւեալն այնց մինչեւ ցգալուստն Քրիստոսի, որպէս և 'ի Դանիէլն Քրիստոսի ամենայն իշխանութիւն և պետութիւն, մահ և կեանք բարձաւ 'ի տանէ Յուդայ և էանց 'ի ձեռս Հռովմայեցւոց։

Եբրայեցիք իսկ առեալ էին զայս մարգարէութիւն վասնգալստեան Մեսիային, որում մինչ ցարդ ակնկալեն. զի գայցէ նա հաստատել զաթոռն Դաւթի։ Եւ եթէ յայս մոլորութեան կացցեն Հրէայք մինչեւ 'ի վախճան աշխարհի, տեսցեն զգալուստ Քրիստոսի. բայց յայնժամ, յորժամ գայցէ փառօք և հրեշտակօք 'ի դատել զաղգ մարդկան, ուր կոծ և ապաշաւիւրեանց յայնժամ անօգուտ լցի։

Սոյնպէս է տեսանել և առ Պօսուէ
եպիսկոպոսին յաւելն նորա. «Եռեսս Յա-
կոբ՝ ասէ, հոգւոյն զնորհուրդ այսր
ընտրութեան. քանզի իբրեւ 'ի պար-
զել հոգւոյն շուրջ պատեալ որդիքն
զմահճաքն՝ հայցէին զօրհնութիւն բար-
ւոյ հօրն, եցոյց նմա Աստուած զհան-
գերձեալ վիճակ ցեղիցն երկոտասանից
յերկրին Աւետեաց։

Համառօտաբ էին բանքն, այլ հոծ
մեծահրաշ իմաստիւք։

Գերապանծ էին ամենայն պատ-
գամքն, զորս խօսեցաւ վասն եղբարց
Յուդայ, և 'ի վերք քան զմարդոյ աս-
տուածազգեցիկ զօրութիւն. այլ 'ի
ժամանել առ Յուդա, խոյանայ և եւս
սրաթռիչ լեզուն, ասէ, Յուդա, ըղ-
քեզ օրհնեսցեն եղբարք քո. ձեռք քո
'ի վերայ թիկանց թշնամեաց քոց. եր-
կիր պագցեն քեզ որդիք հօր քոյ, կո-
ղիւն առիւծու Յուդա, 'ի շառաւիղէ
ելեր որդեակ իմ. ելեր բաղմեցար.
ննջեցեր իբրեւ զառիւծ. և իբրեւ
զկորիւն առիւծու, ո՞ յարուցանէ ըզ-
նա։ Մի պակասեսցի իշխան 'ի Յուդայ.

և այլն որ զինի։

Կարդ բանից մարգարէութեանս
ակնարկէ ըստ գրոյն 'ի բաժինն որ հա-
սանէր Յուդայի յերկրին Աւետեաց։
Բայց յետին բանքն՝ որպէս զիարդ եւ
կամք լցեն իմանալ, ցուցանէ նա ինք-
քն որ յԱստուծոյ գալոց էր, պաշ-
տօնեայ և թարգման կամայ նորա ըն-
թումն աւետեաց, և թագաւոր նորոյ
ժողովրդեան, այն ինքն է Մեսիայն ա-
ծեալ Տեառն։

Առ Յուդա միայն խօսի Յակոբ
յայտնապէս զՄեսիայէ, յորմէ ծնա-
նելոցն էր. այլ 'ի նմա բովանդակէ
հանգամանս համօրէն ազգին. զի զինի
վարատելոյն դարձեալ ընդդրօշիւ Յու-
դայի գումարելոց էին մնացորդք ժո-
ղովրդեանն։ Ի սոյն մարգարէութիւն
Յակոբայ ակն յանդիման երեւի, եւ
կամի իմն ասել նահապետն՝ թէ յա-
ւուրս Մեսիայի սպառեսցի ամենայն
իշխանութիւն 'ի տանէն Յուդայ, որ
է բնաբարձ քակտումն տէրութեան։

Արդ՝ աւանիկ զժամանակ աւուրց
Մեսիային 'ի կրկին նշանայ յայտ առ-

նէ, 'ի բանդելոյ խսպառ թագաւորութեան Յուդայի և ժողովրդեան Հրէից, և 'ի յաձնելոյ նորոյ թագաւորութեան ոչ միոյ միայնոյ ժողովրդեան, այլ ամենայն ժողովրդոց, որոց ամենեցուն պետ եւ ակնկալութիւն Մեսիայն լիցի»։ Վէպք Ա. հատ. 279։

Հ. Յետ այսորիկ այլ ոք մարգարէացաւ վասն գալստեան Քրիստոսի փրկչին մերոյ։

Պ. Աստուածախօսն Մովսէս մեծն 'ի մարգարէս 'ի գիրս Օրինաց 'ի գլ. ԺԸ. հմ. 15 և 18—19, ասէ. «Մարգարէ յեղբարց քոց իբրեւ զիս յարուցցէ քեզ տէր Աստուած քո, նմա լուիջիք»։ Եւս թէ, «Մարգարէ յարուցից նոցա յեղբարց իւրեանց իբրեւ զքեզ. եւ տացէ զպատգամն իմ 'ի բերան նորա. եւ խօսեսցի ընդ նոսա, որպէս և պատուիրեցից նըմա։ Եւ մարդ՝ որ ոչ լուիցէ, զոր խօսիցի մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից վրէժ 'ի նմանէ»։

Հ. Բայց որոմ հաւաստի թէ այս մարգարէութիւն Մովսիսի էր վասն

գալստեան Քրիստոսի։

Պ. Սուրբն Ստեփաննոս նախավկայն Քրիստոսի, յորժամ առաջի քահանայապետին նկարագրէր վկայութեամբ նախահարց իւրեանց զգալուստ Քրիստոսի, եբեր և զայս մարգարէութիւն Մովսիսի նշանակեալ 'ի Քրիստոս, ասելով՝ «Այս Մովսէս, որ ասաց ցորդիսն Իսրայելի, Մարգարէ ձեզ յարուցցէ Տէր Աստուած յեղբարց ձերոց իբրեւ զիս նմա լուիջիք. սա է՝ որ եղեւ յեկեղեցւոջն յանապատի ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ նմա 'ի լերինն Սինայ և ընդ հարսն մեր, որ ընկալաւ զպատգամս կենդանիս տալ մեզ»։ Գործ. Ա. ԺԷ. 37, 38։

Հ. Բայց ոչ ոք յայսց երեւելի մարգարէից՝ այսինքն Եսայեա, Երեմիա, Եղիա, Եղիսէ, կամ այլ ոք 'ի յոգնաթիւ մարգարէից, էր նման Մովսիսի։

Պ. Այո՛, ոչ միւն 'ի նոցանէ, եղեւ նման Մովսիսի, բայց միայն Քրիստոս փրկիչն մեր, որ կատարեաց զամենայն հրաշագործութիւնս 'ի մէջ ժողովրդոցն Իսրայելի, որպէս Մովսէս 'ի Յէ-

Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի Գրադարան

դիպտոս և յանապատին (*)։

Ըստ այսմ է և բան Պօսուէի եպիսկոպոսին յասելն իւրում. «Յոր կամեցեալ Մովսէսի ակնկալութիւն ժողովրդեանն 'ի նա հարստել, վկայէ հաստատութեամբ գալստեան մեծի մարգարէին, որ ծնանելոց էր յազգէն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ»։ «Մարգարէ՝ ասէ, յեղբարց քոց իբրեւ զիս յարուցցէ քեզ Տէր Աստուած քո, նմա լուիջիք»։ Եւ ո՞ արդեօք մարգարէն այն իցէ հանգոյն Մովսէսի, օրէնսդիր իբրեւ զՄովսէս. եթէ ոչ նա ինքն Մեսիայ, որ բանիւ իւրով առաջնորդեսցէ և սրբեսցէ զամենայն տիեզերս։

Քրիստոսի էր անկ նախ առաջին զաստուցանել ժողովուրդ նոր, որում և ասացն. «Պատուիրան նոր տամ ձեզ». և դարձեալ, «Եթէ սիրէք զիս, ըզպատուիրանս իմ պահեսջիք». և եւս

(*) Բայց հրաշագործութիւն Քրիստոսի էր 'ի մարգասիրութենէ՝ եւ Մովսէսին՝ առ 'ի ընկալել զնստատրտութիւն Փարաւոնի։

յայտնագոյն. «Ասացաւ առաջնոցն թէ մի սպանաներ, բայց ես ասեմ ձեզ», և այլն որ զկնի նովին ոճով և նովին իշխանութեամբ։

Սոյն սա է ապա նոր մարգարէն նմանեալ Մովսէսի, տուողն նորոյ օրէնսդրի, և զնմանէ ասաց մեզ Մովսէս 'ի գուշակել իւրում զգալուստ նորա, եթէ «Նմա լուիջիք». և ահա 'ի լրումն խոստմանս այսորիկ ինքն իսկ Աստուած որոտաց 'ի բարձանց զայս բարբառ աստուածային. «Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, զնմա լուարուք»։

Նոյն մարգարէն էր և նոյն Քրիստոս զոր տպաւորեաց Մովսէս օձիւն, պղնձեաւ, զոր կանգնեաց յանապատին։ Հարկ էր մարդկայինս ազգի 'ի նոյն հայելով օձ. այսինքն է 'ի նա հաւատով՝ որպէս ինքն իսկ մեկնաբանէ՝ բժշկել 'ի խայթուածոյ հնոյ օձին, որով թունաւորեալք մահանամք ամենեքեան։ Եւ ընդէր է ինձ զօձն միայն պղնձի ածել 'ի յիշատակ։ Ամենայն օրէնք Մովսիսի, ամենայն զսէր

նորա, քահանայն մեծ կարգեալ ՝ի նը-
մանէ այնչափ խորհրդական արարո-
ղութեամբք, մուտ նորա ՝ի սրբութիւ-
նն. համառօտ ասել՝ ամենայն իսկ
պաշտամունք հրէական օրինաց համե-
ցէն՝ յորում ամենայն ինչ արեամբ սրբ-
բէր, և գառն անգամ ղենեալ ՝ի մեծի
տօնին որ Զատիկն կոչէր՝ ՝ի յիշատակ
աղատութեան աղգին. այս ամենայն
ոչ այլ ինչ նշանակէր՝ բայց միայն զՔ-
րիստոս, որ արեամբն իւրով փրկա-
գործեաց զժողովուրդն Աստուծոյ։
Վէպք աղգաց, Ա. հատ. երես 295.
ըստ այսմ է և բան սրբազան Առաքե-
լին Պօղոսի Յեբրայեցիսն ՝ի գլ. Թ.
հմ. 1-15։

Հ. Յետ որոյ այլ ո՞ք եղեւ երե-
ւելին ՝ի մարգարէից, որ զբաղում
գուշակութիւնս արար զՔրիստոսէ։

Պ. Դաւիթ մարգարէն՝ որ նա-
խաձայնեալ է ՝ի Սաղմոսարանի իւ-
րում զբազում նշանաւոր յայտնու-
թիւնս զՔրիստոսէ, այսինքն նկարա-
գրէ զնորին մարդեղութիւնն, զար-
չարանս, զհամբարձումն, զպէսպէս

պաշտամունս, զմարգարէութիւն, զը-
քահանայութիւն, զթագաւորութիւն
և այլն, զոր օրինակ.

Նախ՝ ձայնէ նա, թէ եկն նա յաշ-
խարհ քարոզել զճշմարտութիւն Աս-
տուծոյ, աւետարանել զարդարու-
թիւն վասն փրկութեան մարդկան,
զանկատարութիւն և զանբաւականու-
թիւն զոհից և պատարագաց Հրէից,
ըստ այնմ թէ. «Բազում արարեր դու
Տէր Աստուած իմ զսքանչելիս քո, և
խորհրդոց քոց ոչ ոք է, որ նմանիցի
քեզ։ Պատմեցի և խօսեցայ, և բա-
զումք եղեն քան զթիւս. ընդ զոհս և
ընդ պատարագս ոչ հաճեցար. լսելիս
հաստատեցեր ինձ, զողջակէզս և ըն-
վասն մեղացն ոչ խնդրեցեր։ Յայնժամ
ասացի թէ, ահաւասիկ գամ ես, ՝ի
գլուխս գրոց գրեալ է վասն իմ։ Առ-
նել զկամս քո Աստուած իմ կամեցայ.
և զօրէնս քո ՝ի մէջ որովայնի իմոյ։ Ա-
ւետարանեցի զարդարութիւն քո յե-
կեղեցիս մեծս, ահա զշրթունս իմ ոչ
արգելից ՝ի քէն։ Տէր դու գիտացեր,
զի զարդարութիւն քո ոչ ծածկեցի ՝ի

սրտի խմում, զճշմարտութիւն քո և զկիրկութիւն քո։ Ասացի և ոչ թաղուցի զողորմութիւն քո և զճշմարտութիւն քո 'ի ժողովրդենէ մեծէ »։ Սաղ. Լ.Թ. 7–13։

Եթէ այս մարգարէութիւն էր վասն Քրիստոսի՝ հաւատի բանիւ սրբբաղան Առաքելոյն Պողոսի յասելն նորա. « Քանզի ոչ կարէր արիւն նոխազացն և ցլուց բառնալ զմեղս. վասն որոյ 'ի մտանել իւրում յաշխարհ ասէ. զոհս և զպատարագս ոչ կամեցար, բայց զմարմին հաստատեցեր ինձ. ընդ ողջակէզս և ընդ վասն մեղայ ոչ հաճեցար։ Յայնժամ ասացի թէ. Ահաւասիկ եկի, 'ի ճառս գրոց գրեալ է վասն իմ առնել զկամս քո Աստուած։ Վերագոյնն ասէ, թէ ընդ զոհս, ընդ պատարագս և ընդ ողջակէզս և ընդ վասն մեղայն ոչ հաճեցար, և ոչ կամեցար, որ ըստ օրինացն մատչէին։ Այս ասէ, ահաւասիկ գամ առնել զկամս քո Աստուած, մերժէ զառաջինն, զի զերկրորդն հաստատեսցէ։ Որով կամքն և մեր սրբեցաք 'ի ձեռն

պատարագի մարմնոյ Յիսուսի Քրիստոսի միանգամ։ Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ 'ի պաշտաման, և զնոյն պատարագս մատուցանէ բազում անգամ, որք ոչ երբէք կարողք են բառնալ զմեղս։ Իսկ սա զմին վասն մեղայ մատոյց պատարագ, և մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ »։ Եբր. Ժ. 4–12։

Երկրորդ՝ ընտրութիւն Տեառն մերոյ 'ի միջոյ ազգայն Հրէից առ 'ի լինել փրկիչ և թագաւոր Իսրայէլի. կանխաւ գուշակեալ է 'ի Դաւթայ խորհրդաւոր նշանօք առ դէմս իւր, ըստ այնմ թէ. « Ի Տեառնէ է օգնութիւն սրբոյն Իսրայէլի թագաւորին մերոյ։ Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո, և ասացեր. Եդիր զօգնութիւն իմ 'ի վերայ հզօրին, և բարձր արարիր զընտրեալն 'ի ժողովրդենէ իմմէ։ Գտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։ Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուսցէ զնա։ Մի մեղիցէ նմա թշնամի, և որդի անօրէնութեան մի չարչարեսցէ

ցէ զնա։ Հարից առաջն նորա զԹշնամիս նորա, և զատելիս նորա 'ի պարտութիւն մատնեցից։ Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա, և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նորա։ Եդից 'ի ծովս զձեռն նորա, և 'ի վերայ գետոց զաջ նորա։ Նա խարդասցէ առ իս՝ հայր իմ ես դու, Աստուած ընդունող փրկութեան իմոյ։ Ես անդրանիկ արարից զնա և բարձր քան զամենայն Թագաւորս երկրի։ Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա։ Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զզաւակ նորա, և զԹռոռ նորա որպէս զաւուրս երկնից»։ Սաղ. ՁԸ. 16_27։

Քրիստոս կոչի անդրանիկ ամենայն արարածոց եւ Թագաւոր Թագաւորաց, ըստ այնմ Թէ. «Որ է պատկեր անեռեւութին Աստուծոյ, եւ անդրանիկ ամենայն արարածոց։ Զի նովաւ հաստատեցաւ ամենայն ինչ, որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի, որք երեւին, և որք ոչ երեւին,

եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ նովաւ և 'ի նոյն հաստատեցաւ։ Կող. Ա. 15_16։

Եւ 'ի Յայտնութեան Յովհաննու ասի. «Եւ ունէր 'ի վերայ պատմուճանի իւրոյ և 'ի վերայ անդամոյ իւրոյ գիր գրեալ. Թագաւոր Թագաւորաց եւ Տէր տերանց»։ ԺԹ. 16։

Ըստ այսմ է տեսանել եւ 'ի բան Սրբազան Պօսուէի հօրն, յասելն նորա Թէ. «Աստուածային ընտրութիւն յայլ ինչ գերագոյն քան զոր Թըւին 'ի վերին երեսս հայեցուցանէ ըստ միտս։ Յաճախ խոստացեալն անդ ուրեմն Մեսիայն իբրեւ որդի Աբրահամու, հանդերձեալ էր լինել և որդի Դաւթի եւ Թագաւորացն Յուդայ։ Խոստումն Աստուծոյ առ Դաւիթ՝ եթէ աթոռ նորա կացցէ յաւիտեան, 'ի Մեսիայն ունէր զկատարումն եւ յանվախճան Թագաւորութիւն նորա։ Սողոմոն՝ որ ընտրեցաւ պայազատել զնա՝ օրինակէ զՄեսիայն. վասն որոյ և ասայ Աստուած զնմանէ. «Ես եղէց

նմա Հայր, և նա եղեցի ինձ յորդի »։ Եւ յայտ է՝ զի ոչ ուրեք խօսեցաւ Աստուած այսպէս զումբէ՝ ի Թագաւորաց կամ՝ ի մարգիանէ։

Այսպէս՝ ի վերջ քան զամենայն ժամանակս առ Դաւիթ եւ որդւովք նորա յայտնի լինէր խորհուրդ գալստեան Մեսիային հրաշալի մարգարէութեամբք, որքան զարեգային պայծառ և լուսաւոր էին »։ Վէպք աղգաց Ա. հատոր, երես 316։

Երրորդ՝ երգելն մանկանց՝ ի տաճարին՝ յորժամ Քրիստոս, Թագաւորն փառաց, մտանէր Յերուսաղէմ, նախաճառէ Դաւիթ՝ ի Սաղմոսի իւրում, ըստ այնմ թէ. « Այսօր է զոր արար Տէր. Եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք՝ ի սմա։ Ո՛ Տէր փրկեա, ո՛ Տէր առաջնորդեա. օրհնեալ՝ որ գալոց ես յանուն Տեառն, և օրհնեցաք զքեզ՝ ի տանէ Տեառն։ Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ »։ Սաղ. ճԺէ. 23_25։

Դարձեալ՝ « Համբարձաւ մեծվայել

չութիւն քո՝ ի վերոյ քան զերկինս։ Ի բերանոց մանկանց տղայոց և ստինդեաց հաստատեցեր զօրհնութիւն »։ Սաղ. Ը. 2։

Ըստ այսմ է տեսանել և՝ ի Մատ. ՝ի գլ. ԻԱ. հմ. 9. ուր ասի. « Եւ ժողովուրդքն որք առաջի և զկնի երթային, աղաղակէին և ասէին՝ Օրհնութիւն որդւոյ Դաւթի. Օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն՝ ի բարձունս »։

Դարձեալ, « Իբրեւ տեսին Քահանայապետքն և Դպիրքն զքանչելիսն՝ զոր արար, և զմանկսին՝ որք աղաղակէին՝ ի տաճարին եւ ասէին, Ովսաննայ. օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան »։ ԻԱ. 15։

Եւ՝ ի նոյն գլուխ ճԺէ. հմ. 22. Դաւիթ կոչէ զՔրիստոս « Վէմն, զոր անարգեցին շինողքն, նա՝ ասէ, եղեւ գլուխ անկեան »։ Քանզի վարդապետք և առաջնորդք Հրէից, որք պարտ էին լինել շինողք եկեղեցւոյն, որոյ վէմն էր Քրիստոս, անարգեցին։ Սմին ազգաւ նա ինքն Քրիստոս տէրն մեր զայս

բան 'ի դէմն ածէ նոցա ասելով. « Զի-
ցէ՞ երբէք ընթերցեալ ձեր 'ի գիրս.
Վէմն՝ զոր անարգեցին շինողքն նա
եղեւ գլուխ անկեան. 'ի Տեառնէ է-
ղեւ այս, և է սքանչելի յաչս մեր »։
Մատթ. ԻԱ. 42։

Ըստ այմ է եւ յԵփեսացիսն 'ի
գլ. Բ. հմ. 20_22, ուր ասի. « Շի-
նեալք 'ի վերայ հիման Առաքելոց և
Մարգարէից։ Որոյ է գլուխ անկեանն
Յիսուս Քրիստոս։ Յորում ամենայն
շինուածն յօդեալ և պատշաճեալ ա-
ճէ 'ի տաճար սուրբ տերամբ։ Յո-
րում և դուք ընդ նմին շինիք 'ի բը-
նակութիւն Աստուծոյ հոգւով »։

Եւ 'ի յԱռաջին Կաթուղիկեայց ա-
սէ. « Քանզի կայ իսկ 'ի գիրս. Թէ ահա
ասիկ դնեմ 'ի Սիոն վէմ ընտիր, գը-
լուխ անկեան պատուական, և որ 'ի
նա հաւատացէ, մի՛ ամաչեսցէ։ Ձեզ
այսուհետեւ հաւատացելոց վէմ պա-
տուական. իսկ անհաւատիցն, վէմ՝
զոր անարգեցին շինողքն, նա եղեւ
գլուխ անկեան։ Եւ վէմ գլորման և
վէմ գայթակղութեան նոցա, որք գայ-

թակղին ապստամբեալքն 'ի Բանէն՝
յոր և եդանն »։ Բ. 6_8։

Զորբորդ՝ նախաձայնէ Դաւիթ նա
և վասն չարչարանաց Տեառն 'ի ձեռն
իշխանաց և ժողովրդոցն Հրէից, ըստ
այնմ թէ. « Ընդէ՞ր խռովեցան հեթա-
նոսք, և ժողովուրդ խորհեցան 'ի սը-
նոտիս։ Յանդիման եղեն Թագաւորք
երկրի, և իշխանք ժողովեցան 'ի միա-
սին վասն Տեառն և վասն օծելոյ նո-
րա »։ Սաղ. Բ. 1_2։

Ըստ այմ է և 'ի Գործս առաքե-
լոց 'ի գլ. Դ. հմ. 26_27. ուր ասի.
« Որ 'ի բերանոյ Հօր մերոյ Դաւթի
ծառայի քո 'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ա-
սացեր. Զմի՞ խորհեցան հեթանոսք
և ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս։
Յանդիման եղեն Թագաւորք երկրի,
և իշխանք ժողովեցան 'ի միասին վասն
Տեառն և վասն օծելոյ նորա »։ Ժողո-
վեցան արդարեւ 'ի քաղաքիս յայսմիկ
'ի վերայ սրբոյ Որդւոյ քոյ Յիսուսի,
զոր օծերն Հերովդէս և Պոնտոս Պիղա-
տոս ազգօք և ժողովրդովք Իսրայէլի »։

Հինգերորդ՝ գուշակէ Դաւիթ ան-

գուբ թշնամանս, անտանելի չարչարանս և մահ, զոր կրեաց Յիսուս 'ի Հրէից, ըստ այնմ թէ. «Շուրջ եղեն զինեալ շունք բազումք, և ժողովք չարաց պատեցին զիս։ Մակեցին զձեռս իմ, և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ. նորա հայեցան եւ տեսին զիս։ Բաժանեցին զհանդերձս իմ 'ի մէջ իւրեանց, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին»։ Սաղ. ԻԱ. 16_18։

Դարձեալ, «Եղուն 'ի կերակուր հնձ լեղի, և 'ի ծարաւ իմ արբուցին հնձ քացախ»։ Սաղ. ԿԲ. 23։ Եւ եւս, «Աստուած իմ, Աստուած իմ, նայեա առ իս, ընդէր թողեր զիս»։ ԻԱ. 1։

Այս ամենայն կատարեցան 'ի Քրիստոս 'ի ժամ Զարչարանաց եւ 'ի Խաչելութեան իւրում, զորոց 'ի յԱւետարանչաց նկարագրեալ է ամենայն. տես 'ի Մատթ. ԻԷ. 1_46։ Ի Մարկոս ԺԵ. 1_35։ Ի Ղուկ. ԻԴ. 1_46. և 'ի Յովհ. ԺԹ. 1_30։

Վեցերորդ՝ գուշակէ Դաւիթ նաև զյարութենէ Տեառն, ըստ այնմ թէ.

«Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։ Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց 'ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քոյ մինչ իսպառ»։ Սաղ. ԺԵ. 10_11։ Եւ այս խսկապէս կատարեցաւ 'ի Քրիստոս. զի որպէս յայտ է, զինի երից աւուրց յարեաւ նա 'ի մեռելոց, և մարմին նորա ոչ ետես ապականութիւն, ըստ այնմ թէ. «Յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարութեան Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա 'ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես ապականութիւն»։ Գործ. Բ. 31։

Դարձեալ 'ի նոյն ասի, «Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա յարուցեալ զՅիսուս. որպէս և 'ի Սաղմոսին գրեալ է յերկրորդում. «Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ»։ Եւ զի յարոյց զնա 'ի մեռելոց, և ոչ ետս դառնալոյ է յապականութիւն։ Այսպէս ասէ. «Եթէ տայ ձեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւա-

տարիմ». քանզի և 'ի միւսումն ասէ, «Ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն»։ Ա՛յլ Դաւիթ յաղագի անդ իւրում պաշտեաց, և 'ի կամս Աստուծոյ ննջեաց, եւ յաւելաւ առ հարս իւր. եւ ետես զապականութիւն։ «Բայց զոր Աստուածն յարոյց ոչ ետես ապականութիւն»։ ԺԳ. 33–37։ Եւ 'ի Կորնթացիսն ասէ, «Զի ես ձեզ զնոյն նախ աւանդեցի. զոր և ես ընկալայ. թէև Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց։ Եւ զի թաղեցաւ, և թէ յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց. ԺԵ. 3–4։

Եօթներորդ՝ նաև գուշակէ Դաւիթ զհամբարձումն Քրիստոսի յերկինս. զնստիլն ընդ աջմէ Հօր, զերկնային թագաւորութիւն նորա, և զնիզն քահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի. ըստ այնմ թէ. «Լեառն ընդ որ հաճեցաւ Աստուած բնակիլ 'ի նմա. քանզի և Տէր իսկ բնակեսցի 'ի նմա իսպառ։ Կառք Աստուծոյ բիւրապատիկք՝ հազարք ուղղիչք, եւ Տէր 'ի նոսա 'ի Սինէ սրբութեան իւրոյ։ Եւ

'ի բարձունս և գերեաց զգերութիւն։ Իսաւ աւար, բաշխեաց պարգեւս, և ետ որդւոց մարդկան. քանզի թերահաւատից եւս բնակեալ եղիցի 'ի նմա»։ Սաղմոս ԿԷ. 16–18։

Ահա այս է յայտնի նկարագիր Քրիստոսի Փրկչին մերոյ, և 'ի համբառնալն յերկինս գերեաց զնշխանութիւն սատանայի, և ետ պարգեւս որդւոյ մարդկան զնորհս Հոգւոյն Սրբոյ, ըստ այնմ թէ. «Ա՛յլ իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ տուեալ է շնորհս ըստ չափու պարգեւացն Քրիստոսի. վասն որոյ ասէ, «Եւ 'ի բարձունս գերեաց զգերութիւն, եւ ետ պարգեւս որդւոյ մարդկան»։ Եփես. Դ. 7–8։

Եւ 'ի Կողոսացիսն ասէ. «Մերկեաց զնշխանութիւնս եւ զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեաց նշաւակեալ զնոսա յանձին իւրում 'ի յաւրութեան իւրում»։ Եփես. Բ. 15։

Դարձեալ 'ի հարիւր ինն երորդում Սաղմոսի ասի. «Ասաց Տէր ցՏէր իմ Նիսա ընդ աջմէ իմմէ մինչեւ եդից զքշնամիս քո պատուանդան ոտից քոց։

Դաւաղան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ՚ի Սիոնէ. և տիրեսցես դու ՚ի մէջ թշնամեաց քոց։ Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեան ՚ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։ Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի, թէ Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և Տէր ընդ աջմէ քումմէ։ Այս մարգարէութիւն ամենայն իրօք հաւատամ թէ վասն Քրիստոսի ասէ Դաւիթ. «Ասաց Տէր ցՏէր իմ», և այլն. ըստ այնմ թէ, «Եւ ՚ի ժողովել փարիսեցւոցն եհարց ցնոսա Յիսուս և ասէ. Զի՞նչդ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՞ր որդի է. ասեն ցնա՝ Դաւթի։ Ասէ ցնոսա Յիսուս, Իսկ զի՞նչդ Դաւիթ հոգւովն կոչէ Տէր և ասէ. «Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց»։ Մատ. ԻԱ. 41–44։ Ըստ այսմ է և ՚ի Գործս Առաքելոց, ուր ասէ, «Զի ոչ եթէ Դաւիթ ել յերկինս. ասէ իսկ ինքն՝ Ասաց Տէր ցՏէր իմ», և այլն որ զկնի։

Բ. 34–35։

Եւ յԵփրայեցիսն ասի. «Նոյնպէս և Քրիստոս ոչ եթէ անձին ինձ շուք եդ լինել քահանայապետ, այլ որ խօսեցաւ առ նա թէ՝ Որդի իմ ես դու. ես այսօր ծնայ զքեզ»։ Որպէս և ՚ի մեւսումն ասէ, «Դու ես քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի»։ Է. 5,6։ Դարձեալ ՚ի նմանում ասէ, «Եւ եւս առաւել յայտ է, թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի յայտնեսցէ այլ քահանայ։ Որ ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ զօրութեան կենացն անվախճանելոյ։ Քանզի վկայեցաւ թէ. «Դու ես քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի»։ Է. 15, 16, 17։

Եւ եւս. «Իսկ յորդին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւաղան ուղղութեան, գաւաղան արքայութեան քո. սիրեցեր զարդարութիւն և ատեցեր զանիրաւութիւն։ Վասն այնորիկ էօծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան զընկերս քո»։

'ի Նոյն, Ա. 8, 9։

Եւ 'ի Գործս Առաքելոց 'ի գլ. Ժ. հմ. 38 ասէ, «Զ Յիսուս՝ որ 'ի Նազարեթէ, զոր էօծ Աստուած Հոգւով Սրբով և զօրութեամբ։

Եւ 'ի Յովհաննու ասէ. «Զի զոր Աստուած առաքեաց, զբանն Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին՝ Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ 'ի ձեռս նորա»։ Գ. 34, 35։

Յայսմ ամենայնի յայտնապէս նը կարագրի Թագաւորութիւն եւ քահանայութիւն Քրիստոսի յաւիտեան։ Ըստ այսմ է եւ բան սրբազան հօրն Պօսուէի յասելն իւրում. «Յառաջագոյն ետես զնա Դաւիթ՝ եւ երգեաց զնա դեղապանծ և անհամեմատ օրինակաւ։ Բաղում անգամ միտ եդեալ զփառս որդւոյ իւրոյ Սողոմոնի հռչակել. ահա անդէն նորա հայր հոգւովն, և 'ի հիացման եղեալ՝ տեսանէր զոմն գերագոյն փառօք և խմաստութեամբ քան զՍողոմոն։ Տեսանէր զՄեսիայն բազմեալ յաթոռ հաստատութեան

առաւել քան զարեւ և զլուսին։ Տեսանէր խնարհեալ առ ոտիւք նորա զամենայն ազգս, եւ զամենեսին օրհնեալ ըստ խոստմանն եղելոյ առ Աբրահամ։ Եւ 'ի վեր ևս կարողութեամբ կշռեալ զմիտս՝ տեսանէր զնա 'ի վայելչութիւն սրբոյ յառաջ քան զարուսեակ ծնանելով յաւիտենից 'ի ծոցոյ հօր իւրոյ, քահանայապետ մշտնջենաւոր. որում ոչ այլ ոք յաջորդէ. և ոչ ինքն ումեք յաջորդեալ. անցեալ նստի քահանայապետ ոչ ըստ կարգին Ահարօնի, այլ ըստ կարգին Մելքիսեկի. կարգ նորահրաշ անծանօթ օրինաց անտի։ Տեսանէր զնա նստեալ ընդ աջմէ Աստուծոյ, հայելով 'ի բարձանց երկնից, արկեալ առ պատուանդանօք ոտիցն զթշնամիս իւր։

Հիացեալ Դաւթի ընդ չքնաղ տեսարանն, այլ յայլմէ լինի 'ի փառաց որդւոյն. եւ Տէր իւր կոչէ զնա»։ Ա. Հատոր, երես 317։

Ուրթերորդ՝ են և այլ և այլ նկարագրութիւնք երեւելի հանգամանաց անձին Քրիստոսի, զորս Դաւիթ ցն-

ծալով երգէ յեսթանասուն և մի երրորդ դուն մաղմոսարանի իւրում թէ. «Աստուած զնրաւունս քո տրքայի տուր, և զարդարութիւն քո որդւոյ թագաւորի»։ և այլն որ գինի, համար 1–20։

Արդ՝ զնկարագրական մարդարէութիւն Դաւթի ոչ կարէաք իմանալ. եթէ էին ոչնք խօսեցեալ վասն Քրիստոսի Փրկչին մերոյ, քանզի՝ իբաղդումս յայնցանէ երեւի զի Դաւիթ նկարագրեալ է՝ ի դէմս իւր կամ՝ որդւոյ իւրոյ Սողոմոնի, եթէ Քրիստոս ինքն, առ աքեալք նորա և վարդապետք եկեղեցւոյ ոչ էին վերկայեալ զայնցանէ նշանակեալ՝ ի Քրիստոս. մանաւանդ զի եւ զբաղումս յայնցանէ առեալ էին Հրէայք վասն դարստեան Մեսիային և թագաւորելոյ նորա որ՝ ի հարց անտի նոցա ակնկալիւր, մանաւանդ՝ ի ժամանակին յոր ծնաւ Յիսուս, վասն որոյ չը կարէաք տալ զայնս Դաւթի, կամ որդւոյ իւրոյ Սողոմոնի։

Հ. Յետ լսելոյ մեր զբաղմորինակ գուշակութիւնս Դաւթի մարգարէին վերաբերեալս առ Քրիստոս փրկիչն մեր,

ոչ և որդի նորա Սողոմոն նախագուշակեալ է ինչ զՔրիստոսէ։

Պ. Բազումք՝ ի հին եւ՝ ի նոր վարդապետաց Քրիստոնէից հաւատոյ կարծիս տան թէ՝ ուղիղորդ զբուս Աւետարանն Սողոմոնի, յոր նկարագրէ նա զիմաստութենէ, այն ամենայն է նկարագիր Քրիստոսի, որ ըստ սուրբ Գրոց է իմաստութիւն Հօր, և զօրութիւն Հոգւոյն Սրբոյ։ Ըստ այսմ է տեսանել առ սրբազան Պօսուէի Եպիսկոպոսին՝ զի գրէ թէ. «Արդ՝ ՝ի իմիտ առնումք զինչ է իմաստութիւն հաստատեալ ըստ Սողոմոնի յառաջ քան զյաւիտեանս՝ ի ծոց Աստուծոյ, որով ուրախ լինէր նա, և հաստատէր նոքաւ զամենայն գործս իւր։ Արդ՝ զիտեմք զայն՝ զոր եռես Դաւիթ ծրնեալ նախ քան զարուսեակ։ Յայտնեցին մեզ մատեանք Նորոց Կտակարանաց, թէ սա է բանն՝ ներքին բարբառ Աստուծոյ. և յաւիտենից իմաստութիւն նորա, որ՝ ի ծոց նորա կոյ հանապազ, և որով հաստատեցան ամենայն եղականք»։ Վէպք աղգաց Բ. հա-

տոր, երես 30։

Հ. Բայց ո՞չ նա Երգոց Երգոյն Սո-
ղոմոնի, յոր յաճախ երգէ զիեսայէ և
զՀարանէ վերաբերի առ Քրիստոս և
Եկեղեցի իւր։

Պ. Այնմանման եւ այլաբանու-
թիւնք և նմանութիւնք նաև մարգա-
բէն Դաւիթ երգէ 'ի գլուխ ԽԴ. Սաղ-
մոսի իւրում, և 'ի Թղթոց ինչ Առա-
քելոց և 'ի Յայտնութենէ Յովհաննու
մեկնիչք Սուրբ Գրոց հաստատեն, թէ
"Երգոց Երգոյն Սողոմոնի է իսկապէս
հոգեղէն նկարագրութիւնն Քրիստոսի
և Եկեղեցւոյ իւրոյ"։

Տես և յԵփեսացիսն 'ի գլ. Ե. հմ.
23, 24, 25 և 32։ Եւ 'ի Յայտնութեան
Յովհաննու գլ. ԻԲ. հմ. 16, 17։

Հ. Յետ որոյ և այլ ո՞ եղեւ նախա-
գուշակող զգալստեանէ Քրիստոսի յԱ-
ստուածաշունչ Գիրս։

Պ. Եայեաս՝ որ կոչի Աւետարա-
նական մարգարէ, քանզի սա նախա-
զեկոյց զծնանիլն Յիսուսի, և զբաղմ-
բինակ դիպուածսն Քրիստոսի, որք ա-
մենայն ոստնապէս երեւին յԱւե-

տարանին սուրբ։ Այսինքն են, նախ՝
յայտ առնէ զծնանիլն Յիսուսի 'ի կու-
սէ, ըստ այնմ թէ. "Վասն այսորիկ
տացէ ձեզ Տէր նշան. Ահա կոյս յղ-
ասցի, և ծնցի որդի, և կոչեսցին զա-
նուն նորա Էմմանուէլ"։ Եսայի է. 14։
Յայտ իսկ է. զի ըստ այնմ Մարգա-
բէութեան ծնաւ Քրիստոս 'ի Մարիա-
մայ սրբոյ Կուսէն, ըստ այնմ թէ. "Եւ-
մինչդեռ զայս ասէր զմտաւ և ահա Հր-
եշտակ Տեառն երեւեցաւ նմա և ա-
սէ. Յովսէփ, որդի Դաւթի. Մի՛ եր-
կնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին
քո. քանզի որ 'ի նմայն ծնեալ է 'ի
Հոգւոյն Սրբոյ է. Ծնցի որդի, և կո-
չեսցես զանուն նորա Յիսուս. զի նա
փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց։
Այլ այս ամենայն եղեւ, զի լցցի, որ
ասացաւն 'ի ձեռն Եսայեայ մարգա-
բէի։ Ահա կոյս յղասցի, և այլն։ Մատ.
Ա. 20—23։

Երկրորդ՝ յայտ առնէ, զի եղիցի
նա յարմատոյ Յեսսեայ կամ Դաւթի.
Թագաւոր Իսրայէլի և հեթանոսաց,
եւ Թագաւորութիւն նորա կացցէ

յաւիտեան, ըստ այնմ թէ. «Եւ եղիցի յաւուր յայնմիկ արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, և ի նմա հեթանոսք յուսասցին. և եղիցի հանգիստն նորա պատուական» : ԺԱ. 10 :

Դարձեալ, «Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն եղև ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա Հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի Խորհրդակից, Աստուած հզօր, իշխան, Հայր հանդերձելոյ աշխարհին : Եւ ես ածից զխաղաղութիւն ի վերայ իշխանացն նորա, և առողջութիւն նմա. մեծ է իշխանութիւն նորա. և խաղաղութեան նորա չիք սահման : Յաթոռն Դաւթի նստցի և զարքայութիւն նորա յաջողեսցէ : Եւ զօրացուսցէ զնա իրաւամբքն և արդարութեամբ, յայսմ հետէ և յաւիտեանս ժամանակաց. նախանձ Տեառն զօրութեանդ արասցէ զայս» : Թ. 6, 7 :

Երրորդ՝ յայտ առնէ նա զմերժելն Հրէից զՔրիստոս, եւ ընդունիլն հեթանոսաց ի Քրիստիչ իւրեանց, ըստ այ-

նմ թէ. «Եղիցի քեզ ի որբութիւն. և ոմանք զբարի ոչ հարկանիցի, եւ գայթակղութիւն քեզ ոչ պատահեսցէ» : Բ. 14 :

Ըստ այսմ է, որ գրի ի Հովսեայեցիս թէ, «Որպէս գրեալ է, ահաւասիկ դնեմ ի Սիոն զքար գայթակղութեան, և զվէմ գլորման, և ամենայն որ հաւատասցէ ի նա, մի ամաչեսցէ» : Թ. 33 :

Եւ ի յառաջին Կաթողիկեացդ ասէ. «Եւ զվէմ գլորման և զվէմ գայթակղութեան նոցա, որք գայթակղին և ապստամբեալքն ի բանէն, յոր և եդանն» : Բ. 8 :

Նաեւ յայտ առնէ նա զհերքելն Հրէից զՔրիստոս, և զբարին, զոր հաստատեցին նմա, ըստ այնմ թէ. «Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ : Պատմեցաք առաջի նորա իբրեւ զմանուկ. իբրեւ զարմատ ի ծարաւուտ երկրէ, ոչ գոյր նորա տեսիլ, և ոչ փառք. տեսաք մեք զնա, և ոչ գոյր տեսիլ, և ոչ գեղեցկութիւն, այլ տեսիլ նորա անարգ,

նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան։ Ա. յր մի ի հարուածս, և գիտէ համբերել յաւոյ, զի դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ և ոչ ինչ համարեցաւ »։ Ծգ. 1, 2, 3։

Ի բաղումս տեղիս ի մարգարէութեան Եսայեայ նախագուշակէ նա լինելոյն Քրիստոսի Փրկիչ եւ Թագաւոր հեթանոսաց. նախ՝ ի գլուխս Խթ. հմ. 6, 7. ասէ, « Եւ ասէ ցնա մեծ է քեզ այդ. կոչել զքեզ ծառայ իմ, հաստատել զազգսն Յակովբայ, և զցրուեալսն Իսրայելի դարձուցանել։ Ահաւասիկ եդի զքեզ յուխտ ազգի և ի լոյս հեթանոսաց՝ լինիլ փրկութիւն մինչեւ ի ծագս երկրի։ Այսպէս ասէ Տէր, որ փրկեացն զքեզ Աստուած Իսրայելի. որքեցէք զոյն, որ խոտէն զանձն իւր, զաղատելն յազգայ, ի ծառայսն իշխանաց. Թագաւորք տեսցեն զնա՝ և յոտին կացցեն իշխանք՝ և երկիրպագցեն նմա վասն Տեառն. զի հաւատարիմ է աստուծն Իսրայելի և որ ընտրեցայ զքեզ »։

Երկրորդ՝ ի գլուխս Խգ. հմ. 1–6. ասէ, « Եւ արդ՝ այսպէս ասէ Տէր Աստուած, որ արար զքեզ, Յակովբ, և ստեղծ զքեզ, Իսրայել. մի երկնչիր, զի փրկեցի զքեզ, և կոչեցի զքեզ զանուն քո, թէ իմ ես։ Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս, ընդ քեզ եմ. և գետք զքեզ մի ողողեսցեն. և եթէ անցանիցես ընդ հուր, մի այրեսցիս, և բոց նորա զքեզ մի կիզիցէ։ Զի ես եմ Տէր Աստուած քո սուրբն Իսրայելի, որ փրկեմ զքեզ. արարի փոխանակ քո զԵգիպտոս և զԵթովպիա և զՍուհէն քեզ փոխանակեցի՝ ուստի և պատուական իսկ եղեր և առաջի իմ փառաւորեցար. և ես սիրեցի զքեզ, և տայ զմարդիկ փոխանակ քո. և զիշխանս փոխանակ գլխոյ քո։ Մի երկնչիր, զի ընդ քեզ եմ, յարեւելից ածից զզաւակ քո. և յարեւմտից ժողովեցից զքեզ։ Ասացից հիւսիսոյ ած, և հարաւոյ մի արգելուր, ածէք զորդիս իմ ի հեռաստանէ, և զդստերս իմ ի ծագաց երկրի »։

Երրորդ՝ ի գլուխս Խթ. հմ. 6, 7. ասէ, « Յակովբ ծառայ իմ, օգնական է

ղէց նմա, Իսրայէլ ընտրեալ իմ, զոր ընկալաւ անձն իմ, ետուս զոգի իմ ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց հանցէ։ Մի աղաղակեսցէ եւ մի վիճեսցի, և մի ոք լուիցէ արտաքոյ ըղբարբառ նորա։ Այլ հանցէ ի ճշմարտութիւն զիրաւունս, ծագեսցէ և մի խարտակեսցի, մինչեւ դիցէ յերկիր զդատաստան. և յանուն նորա հեթանոսք յուսասցին։ Այսպէս ասէ Տէր Աստուած, որ արար զերկինս և կանգնեաց զնա, և որ հաստատեաց զերկիր, և որ ի նմա. որ ետ շունչ մարդկան որ ի վերայ նորա, ոգի ամենեցուն, որ կոխեն զնա. ես Տէր Աստուած կոչեցի զքեզ արդարութեամբ, կալայ զաջոյ ձեռանէ քումմէ, և զօրացուցի զքեզ. և ետուս զքեզ յուխտ ազգին, և ի լոյս հեթանոսաց։ Բանալ զաչս կուրաց, հանել զկապեալս ի բանտէ, ի տանէ կապանաց, որ նըստին ի խաւարի»։

Զորրորդ՝ ի գլուխս ԺԳ. հմ. 10. ասէ. «Տէր կամի սրբել զնա ի վերայ անտի։ Եթէ տաջիք և վասն մեղացն,

անձինք ձեր տեսցեն զզաւակ երկայնակեաց. և կամի Տէր ի ձեռն նորա բառնալ ի ցաւոց անձին նորա»։

Հինգերորդ՝ ի գլուխս ԽԷ. հմ. 4, 5. ասէ. «Վասն Յակոբեայ ծառայի իմոյ, և Իսրայէլի ընտրելւոյ իմոյ, ես կոչեցիցէ զքեզ զանուն քո, և ընկալայց զքեզ, և դու զիս ոչ ծանեար։ Եմէ ես Տէր Աստուած քո, և չիք այլ ոք, և ծանիցեն յարեւելից եւ յաքեւմտից թէ չիք ոք բայց զիս»։

Վեցերորդ՝ ի գլուխս ԽԵ. հմ. 15—18. ասէ. «Զի թողջիք զանուն ձեր ի յաղագս ընտրելոյ իմոյ, և զձեզ Տէր սատակեսցէ։ Եւ ծառայից իմոց կոչեցիցէ զանուն նոր։ Որ օրհնեսցի ի վերայ երկրի. զի օրհնեսցեն զԱստուած ճշմարիտ. և որ երդնուցցուն ի վերայ երկրի, երդուիցեն յԱստուած ճշմարիտ. զի մոռասցին զնեղութիւնս առաջինս. և ոչ եւս անկցի ի սիրտ նոցա։ Զի եղիցին երկինք նոր և երկիր նոր, և ոչ եւս յիշեսցեն զառաջինսն, և ոչ եւս անկցի ի սիրտ նոցա։ Այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն

'ի նմա, զոր ես հաստատեցիր »։

Չորրորդ՝ նախաձայնեալ է Մարգարէս զհանգչելն 'ի վերայ Քրիստոսի Փրկչին մերոյ Հոգի Աստուծոյ և Հոգի իմաստութեան, և այլն, ըստ այնմ թէ. « Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ. եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի։ Եւ հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան և հանճարոյ, Հոգի խորհրդոյ և զօրութեան, Հոգի գիտութեան և աստուածպաշտութեան, եւ լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ։ Ոչ 'ի կարծ դատեսցի, և ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ, այլ արասցէ իրաւունս տընանկին, և յանդիմանեսցէ զխոնարհս երկրի, և հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ, և հոգւով շրթանց իւրոց սատակեսցէ զամբարիշտս։ Եւ եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր. և ճշմարտութի՛ն պատեալ զկողս իւր »։ Եսայ. ԺԱ. 1—5։ Այս մարգարէութիւն է յայտնի նկարագրութիւն Քրիստոսի, որպէս գրի 'ի Յովհաննու 'ի գլուխ Գ. հմ. 34. թէ. « Զի զոր Աստուած ա-

ռաքեաց՝ զբանսն Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին »։ Դարձեալ թէ. « Վկայեաց Յովհաննէս և ասէ, թէ տեսանէր զՀոգին, զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից. և հանգչիւր 'ի վերայ նորա »։ Ի նոյն Ա. 32։ Եւ 'ի Կողոսացիսն գրի. « Յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան, այսինքն 'ի Քրիստոս »։ Բ. 3։

Հինգերորդ՝ նախագուշակէ Եսայեայ նաև զպաշտօն Փրկչին աւետարանելոյ աղքատաց, քարոզելոյ գերեաց զթողութիւն, եւ մխիթարելոյ զամենայն սգաւորս, և այլն. ըստ այնմ թէ. « Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք. գերեաց քարոզել, զթողութիւն և կուրաց տեսանել, կոչել ամ Տեառն ընդունելի, և օր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս, տալ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մխրոյն՝ օծումն ուրախութեան և սգաւորացն. հանդերձ

փառաց վսխմնակ ոգւոցն վհատու-
թեան »։ ԿԱ. 1–3։

Այս ամենայն յայտնութիւնք կա-
տարեցան 'ի Քրիստոս, ըստ այնմ
թէ. « Եւ եառուն նմա գիրս զԵսայեայ
մարգարէի. և յարեաւ ընթեռնուլ,
և իբրեւ եբաց զգիրսն, եգիտ զայն
տեղն, յորում գրեալն էր. « Հոգի
Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և էօծ
իսկ զիս, աւետարանել աղքատաց ա-
ռաքեաց զիս, քարոզել գերեաց ըզ-
թողութիւն, և կուրաց տեսանել, և
արձակել զվիրաւորս. քարոզել զտա-
րեկան Տեառն ընդունելի և զօր հա-
տուցման։ Եւ խփեալ զգիրսն ետ ցը-
պաշտօնեայն և նստաւ. և ամենեցուն՝
որք 'ի ժողովրդեանն էին աչք, 'ի նա
հայէին։ Եւ սկսաւ ասել ցնոսա. « Այս
օր լցան գիրքս այս յականջս ձեր »։
Ղ-ւկ. Դ. 17–21։

Վեցերորդ՝ նախագուշակէ սա նաև
զպէսպէս հրաշագործութիւնսն Քրի-
ստոսի, ըստ այնմ թէ. « Զօրացա-
լուք ձեռք լքեալք և ծունկք կթու-
յեալք, մխիթարեցարուք կարճամիտք

սրտիւք, զօրացարուք և մի երկնչիք։
Ահաւասիկ Աստուած մեր հատուցա-
նէ դատաստան, և հատուցանէ, ինքնին
եկեսցէ և փրկեսցէ զմեզ։ Յայնժամ
աչք կուրաց բացցին և ականջք խլ-
ացեալ լսիցեն։ Յայնժամ վազեսցէ կա-
ղն իբրեւ զեղջերուս, եւ պարզ լիցի
լեզու ծանրախօսից »։ Էս. 3–6։

Ահա այս ամենայն կատարեցան 'ի
Քրիստոսէ Փրկչէն մերոյ. ըստ այնմ
թէ, « Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ
'ի բանտէն զգործսն Քրիստոսի, առա-
քեաց 'ի ձեռն աշակերտաց իւրոց։
Եւ ասէ ցնա, Դու ե՞ս որ գալոցն ես,
եթէ այլում ակնկալցուք։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Գը-
նացէք և պատմեցէք Յովհաննու, զոր
լուաք, և զոր տեսիք. Կոյրք տեսանեն,
կաղք գնան, բորոտք սրբին, և խուլք
լսեն և մեռեալք յառնեն, եւ աղ-
քատք Աւետարանին »։ Մաթ. ԺԱ.
2–5։

Եօթներորդ՝ նախագուշակէ Նոյ-
եան առաքեալն Քրիստոսի զԿարապետ
և զառաջնութեան 'ի պատրաստել ըզ-

ճանապարհ գալստեան իւրոյ, ըստ այնմ թէ. «Զայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, և ուղիղ արարէք ըզշաւիղս Աստուծոյ մերոյ։ Ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին, և երեւեսցին ամենայն դժուարինք 'ի դիւրինս, և առապարաք 'ի դաշտս։ Եւ երեւեսցին փառք Տեառն. եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ, զի Տէր խօսեցաւ»։ Ի. 3–5։

Ի սմին նախաձայնեալ Զայն բարբառոյ յանապատի է սուրբն Յովհաննէս Մկրտիչ. որ եղեւ Կարապետ Քրիստոսի 'ի պատրաստել զճանապարհ Նորա, ըստ այնմ թէ. «Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ. քարոզել յանապատին Հրէաստանի։ Եւ ասել՝ Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից։ Զի սա է, վասն որոյ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. «Զայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղ արա-

րէք զշաւիղս Նորա»։ Մատ. Գ. 1–3։

Եւ յառաջին Տիմոթէոսի գրի. «Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդ աստուածպաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնեցաւ Հրեշտակաց, քարոզեցաւ 'ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ աշխարհի, և վերացաւ փառաւք»։ Գ. 16։

Ուրեմն՝ նախագուշակէ Եսայեայ. նաեւ վասն չարչարանաց և մահուան Տեառն, ըստ այնմ թէ. «Նա զմեղս մեր բառնայ. և վասն մեր չարչարի, և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի չարչարանս։ Իբրեւ յԱստուծոյ։ Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց. և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա. և Նորա վիրօքն բժշկեցաք։ Ամենեքեան իբրեւ ոչխարք մոլորեալք. այր 'ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր։ Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր, իբրեւ ոչխար 'ի սպանդ վարեցաւ. իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ

այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ. և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի բառնին յերկրէ կեանք նորա. յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ 'ի մահ մատնեցաւ »։ ԾԳ. 4—8։

Յայտ իսկ է, զի այս ամենայն ըստ վկայելոյ Մատթէոսի 'ի գլուխս ԻԶ—ԻԷ. « Կատարեցան 'ի Քրիստոս »։ Ըստ այսմ է եւ 'ի Գործս Առաքելոց 'ի գլուխս Ը. հմ. 26—33։

Հ. Երեմիա եւս մարգարէացաւ վասն Քրիստոսի փրկչին մերոյ։

Պ. Այո՛, նա եւս խօսեցեալ է ինչ ինչ վասն Քրիստոսի. որպէս 'ի գլուխս ԻԳ. հմ. 5, 6. ասէ. « Ահա աւուրք գան, ասէ Տէր, և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան. և թագաւորեսցէ թագաւոր, և 'ի միտ առցէ, և արասցէ իրաւունս եւ արդարութիւն 'ի վերայ երկրի։ Յաւուրս նորա փրկեսցի Յուդա և Իսրայէլ բնակեսցի յուսով. և այս է անուն նորա, զոր կոչեսցէ նմա Տէր՝ Յովսեդեկ 'ի մարդարէս արդարութիւն մեր »։

Զսոյն բան կրկնէ նաեւ 'ի գլուխս ԼԳ. հմ. 14—17. այսինքն՝ « Ահա աւուրք գան ասէ Տէր. և հաստատեցից զբանս իմ բարի, զոր խօսեցայ 'ի վերայ տանդ Իսրայէլի, և 'ի վերայ տանդ Յուդայ։ Յաւուրս յայնոսիկ և 'ի ժամանակին յայնմիկ ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, որ առնիցէ իրաւունս և արդարութիւն երկրի։ Յաւուրսն յայնոսիկ փրկեսցի Յուդա. և Երուսաղէմ բնակեսցէ յուսով. և այս է անուն զոր կոչեսցէ նմա Տէր. արդարութիւն մեր »։ Եւ և այլ մարգարէութիւնք սորա վերաբերեալ առ Քրիստոս, որոյ ոմանք զետեղեալ կան յԱւետարանին սուրբ. որպէս այս բան, որ 'ի գլուխս ԼԱ. հմ. 15. ասէ. « Այսպէս ասէ Տէր, ձայն 'ի Հռամայ լսելի եղեւ, ողբումն և լալումն եւ գուժումն, Ռաքէլ լայր զորդիս իւր. և ոչ կամէր միխիթարիլ 'ի վերայ որդւոց իւրոց, զի ոչ էին »։ Մատ. Բ. 18։

Հ. Զինչ է եւ մարգարէութիւն Եղեկիէլի վասն Քրիստոսի փրկչին մերոյ։

Պ. Սա նկարագրէ 'ի դէմն Դաւ-
թի ծառայի Աստուծոյ լինելն Քրիս-
տոսի հովիւ և թագաւոր Իսրայէլի.
ըստ այնմ թէ. «Եւ կացուցից 'ի վե-
րայ նոցա հովիւ մի զծառայ իմ զԴա-
ւիթ. և նա հովուեսցէ զնոսա, նա ե-
ղիցի նոցա հովիւ։ Եւ ես Տէր եղէց
նոցա Աստուած. և Դաւիթ ծառայ
իմ իշխան 'ի մէջ նոցա»։ ԼԴ. 23, 24։

Եւ այլուր ասէ. «Այսպէս ասէ,
Տէր Տէր, ահաւասիկ ես առնում ըզ-
տունդ Իսրայէլի 'ի միջոյ ազգացդ,
յորս մոլին 'ի նոսա, և ժողովեցից ըզ-
դոսա յամենայն ազգաց, որք շուրջ
զդոքօք են, եւ տարայց զդոսա յեր-
կիրն Իսրայէլի։ Եւ տայ զդոսա յաղդ
մի յերկրին իմում 'ի լերինսն Իսրայէ-
լի. և մի իշխան եղիցի 'ի վերայ ամե-
նեցուն դոցա 'ի թագաւոր, և ոչ ևս
եղիցին յերկուս ազգս, և ոչ ևս բա-
ժանեսցին յերկուս թագաւորս։ Զի
մի ևս պղծեսցին 'ի կուռս իւրեանց,
և մի 'ի գարշելիս իւրեանց, եւ յամե-
նայն ամպարշտութիւնս իւրեանց. և
փրկեցից զդոսա յամենայն անօրէնու-

թեանց դոցա, զոր մեղան 'ի նոսա, և
սրբեցից զդոսա, և եղիցին ինձ ժողո-
վուրդ, և ես եղէց դոցա Աստուած։
Եւ ծառայ իմ Դաւիթ իշխան 'ի մէջ
դոցա, և մի հովիւ եղիցի ամենեցուն
դոցա. զոր ըստ հրամանաց իմոց գը-
նասցեն և զկրաւունս իմ պահեսցեն,
և արասցեն զնոսա»։ Լէ. 21_24։

Ըստ վկայութեան Աւետարանչաց
յայտ է, զի Քրիստոս եղև միայն հովիւ
և թագաւոր Իսրայէլի, ըստ այնմ թէ.
«Պատասխանի ետ նմա Նաթանայէլ
և ասէ. Ռաբբի դու ես որդի Աստու-
ծոյ, դու ես թագաւոր Իսրայէլի»։
Յովհ. Ա. 49։

Դարձեալ, «Ես եմ հովիւ քաջ,
հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ
ոչխարաց։ և այլն զկնի»։ 'ի նոյն ԺԱ.
11_18։

Հ. Զի՞նչ էին եւ կանխաձայնու-
թիւնք Դանիէլի մարգարէին վասն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Պ. Դանիէլ նկարագրէ զՔրիստոս
որդի մարդոյ եկեալ ամպոք յերկնից.
տուեալ նմա իշխանութիւն, փառք և

թագաւորութիւնք յաւիտեան. և թէ ամենայն ժողովուրդք և ազգք ծառայեսցեն նմա. քան այնմ թէ. «Տեսանէի ի տեսլեան գիշերոյ. և ահա ընդ ամպս երկնից իբրեւ որդի մարդոյ գայր, և հասանէր մինչեւ ի հին աւուրսն. և մատուցաւ առաջի նորա։ Եւ նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքայութիւն. եւ ամենայն ազգք և ազինք և լեզուք նմա ծառայեսցեն. և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական, որ ոչ անցանէ, և թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի։ Է. 13_14։

Այսմ վկայի ի Մատթէոսի ի Գլ. ԻԴ. 39. եւ ի ԻՋ. 64. թէ Քրիստոս է Որդի մարդոյ, և եկեսցէ ընդ ամպս երկնից, քան այնմ թէ. «Եւ ոչ գիտացին, մինչեւ եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին. այնպէս եղիցի և գալուստ Որդւոյ մարդոյ։ Դարձեալ՝ ասէ ցնա Յիսուս. դու ասացեր, բայց ասեմ ձեզ, յայսմ հետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան. և եկեալ ընդ ամպս երկնից»։

Է և կարի նշանաւոր թիւ գալուստեան Քրիստոսի ցուցեալ Դանիէլի ի Գաբրիէլ հրեշտակէն. այսինքն է. «Եւ մինչդեռ խօսէի յաղօթսն, և ահա այրն Գաբրիէլ՝ զոր տեսանէի յառաջնում տեսլեանն, թռուցեալ և մերձեցաւ առ իս իբրեւ ի ժամ երեկոյին պատարագին։ Եւ խելամուտ արար զիս. և խօսեցաւ ընդ իս և ասէ. Դանիէլ, այժմ եկի խելամուտ առնել զքեզ։ Ի սկզբան աղօթից քոց ել պատգամ. և ես եկի պատմել քեզ, զի այր ցանկալի ես դու. արդ ած զմտաւ զբանդ. և ի միտ առ զտեսիլդ։ Եօթանասուն եօթներորդք համառօտեցան ի վերայ ժողովրդեան քո և ի վերայ քաղաքին սրբոյ. ի վախճանիլ մեղաց, և ի կնքել անօրէնութեանց. և ի քաւել ամբարշտութեանց, և ի գալ յաւիտենական արդարութեան. և ի կնքել տեսլեան և մարգարէի. և յօծանել սրբութիւն սրբութեանց։ Թ. 20_24։

Այս եօթանասուն շաբաթք են եօթանասուն անգամ եօթնաւորք, որք

'ի մարգարէական բարբառ են չորս հարիւր և ինսուն ամք, որ է թիւ գալստեան Քրիստոսի սկսեալ յիշխանութենէ Նեհեմայ և 'ի նորոգութենէ Երուսաղէմի եկեղեցւոյն Հրէից, որպէս և 'ի գալ Քրիստոսի այս ամենայն մարգարէութիւնք կատարեցան։

Զայս թիւ գալստեան Քրիստոսի դեղեցիկս մեկնէ սրբազան Պօսուէ եպիսկոպոսն յասելն նորա. «Եցոյց Աստուած Դանիէլի և զժամանակ գալստեան Որդւոյ մարդոյ՝ զՔրիստոսի ասեմ տենչալւոյն 'ի յաւիտենից։ Եցոյց եթէ զիաՀրդ կատարելոյ է 'ի նա գործ փրկութեան ազգի մարդկան։ Իբրեւ այն ինչ պատազեալ զգերութեամբ ժողովրդեան իւրոյ 'ի Բաբելովն, և զեօթանասուն ամօքն յորս չափեաց Աստուած զգերութիւն նոցա. աղօթս մատուցանէր վասն ազատութեան եղբարց իւրոց. թուեաւ մտօքն 'ի նկատել գերագոյն եւս գաղտնին. ետես այլ թիւ համարոյ ամաց. և այլ գերահրաշ ազատութիւն։ Ընդ եօթանասուն ամայն՝ զորս ետես Երեմիա,

տեսանէ զեօթանասուն երրորդսն։ Սկիզբն առնուն ամք եօթներորդացս 'ի հրամանէ անտի երկոյնաձեռն Արտաշիսի վասն կառուցանելոյ զքաղաքն Երուսաղէմ, որ ամ քառասներորդ էր թագաւորութեան նորա։ Առ 'ի կատարած եօթներորդացն նշանակէ յայտնապէս «Զքաւութիւն ամբարշտութեանց, զթագաւորութիւն յաւիտենական արդարութեան, զգնքել տեսլեան և մարգարէութեան, եւ զօծութիւն սրբութիւն սրբութեանց»։

Զկնի վաթսուն և իններեօթներորդաց վարեսցէ Քրիստոս զնչխանութիւն իւր և զառաջնորդութիւն ժողովրդեան։ Եւ յետ վաթսուն և իններեօթներորդաց քանզի և մարգարէն երկրորդէ զսոյն «Բարձցի օծութիւնն» բռնամահ լիցի, և մատուսցէ զանձն յողջակէզ 'ի լրումն խորհրդոցն։ Ցուշ առնէ մարգարէն խնամով զվերջին եօթներորդս, զի 'ի նմա մեռանիցի Քրիստոս, 'ի նմա «Զօրացուսցէ զուխտն և 'ի կէս նորին բարձցին սեղանք և պատարագ

որպէս յայտ է մահուամբն Քրիստոսի քանզի զինի մահու նորա ցուցանէ ըզ-գէպս իրացդ։ Յետ մահուան Քրիս-տոսի և Համբարձման նուիրաց արհա-ւիրք և տագնապք յաճախեսցեն կոր-ծանեսցի քաղաքն սուրբ եւ սրբու-թիւնք. խաղասցէ 'ի վերայ նոցա ազգ մի առաջնորդաւն հանդերձ ընկել զա-մենայն, կացցէ պղծութիւն 'ի վերայ տաճարին, և ամայութիւն յետին եւ աննորոգելի գոցէ զժողովուրդն՝ որ ապաշնորհ գտաւ առ փրկիչ իւր »։ Վէպք ազգաց. Ա. հատոր. երես 353 — 354։

Ո՛վ, սարսափ կալնու զիս, յորժամ զմտաւ ածեմ զհարուածան, որ ըստ կանխասացութեան Քրիստոսի եկն 'ի վերայ տիրասպան ազգիս այսորիկ, ըստ այնմ թէ. "Ո՛չ մնասցէ այդր քար 'ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի »։ Մատ. ԻԴ. 1, 2։ Եւ եւս թէ. "Օձք՝ ծնունդք լիժից, զիարդ փախնուցուք 'ի դատաստանէ գեհենին »։

Վասն այսորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս իմաստու-

նս և զգպիրս, և 'ի նոցանէ սպանանիցէք և 'ի խաչ հանիցէք. և 'ի նոցանէ տանջիցէք 'ի ժողովուրդս ձեր. և հալածիցէք 'ի քաղաքէ 'ի քաղաք։ Որպէս զի եկեսցէ 'ի վերայ ձեր ամենայն արիւն արդար, հեղեալ յերկրի յարեւնէն Աբելի արդարոյն՝ մինչեւ ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքիայ. զոր սպանիք 'ի մէջ տաճարին և սեղանոյն։ Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն 'ի վերայ ազգիս այսորիկ։

Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորես զմարգարէս, և քարկոծ առնես զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւօք, և ոչ կամեցայք։ Ահա թողեալ լեցի ձեզ տունդ ձեր աւերակ »։ 'ի նոյն. ԻԳ. 33—38։

Արդարեւ ըստ պատմութեան Յովսեփոսի և այլ ժամանակայ նորին այս ամենայն աւերածութիւն ազգիս կատարեցան 'ի ձեռն Տիտոսի իշխանին Հռովմայեցւոց, որ հիմնայատակ արար զԵրուսաղէմ, այրեաց զտաճարն կո-

զոպտեաց զարբութիւնն և զաղգն գըլ-
խովին մատնեաց ՝ի սով, ՝ի սուր և ՝ի
գերութիւն ։

Ահա դատաստան արդար դատա-
ւորին էած զարիւն արդարոյն ՝ի վե-
բայ աստուածամարտ ժողովրդոյն, որք
աղաղակէին առաջի Պիղատոսի և ա-
սէին. “Արիւն դորա ՝ի վերայ մեր և
՝ի վերայ որդւոց մերոց ։ Մաթ. Իէ. 25։

Հ. Զի՞նչ է հետագայ մարգարե-
ութիւն վասն Քրիստոսի խօսեցեալ ՝ի
սուրբ Գիրս ։

Պ. Ի մարգարէութիւնն Միքիայ.
զի սա է որ կանխաձայնեաց զտեղի ծը-
նընդեան Քրիստոսի և այլ հնորհաց նո-
րին. ըստ այսմ թէ. “Եւ դու Բեթ-
լեհէմ տուն Եփրատայ, սակաւաւոր
իցես լինել ՝ի հազարաւորս Յուդայ,
՝ի քէն ելցէ լինձ իշխան Իսրայէլի, և
ելք նորա ՝ի սկզբանէ աւուրց աշխար-
հի ։ Վասն այսորիկ տայ զնոսա մինչ-
չեւ ՝ի ժամանակ ծննդականի. ծնցի,
և մնացորդք եղբարց նորա դարձցին
առ որդիսն Իսրայէլի ։ Եւ կացցէ, և
տեսցէ և հովուեսցէ հօտի իւրոյ զո-

րութեամբ Տեառն, և ՝ի փառս ան-
ուան Տեառն Աստուծոյ իւրեանց հաս-
տատեսցեն ». գլուխ Ե. հմ. 2–4։

Ըստ վկայելոյ Աւետարանչին յայտ
է, զի Քրիստոս ծնաւ ՝ի Բեթլէհէմ
Հրէաստանի, յաւուրս Հերովդէի արբ-
քայի. ահա մոգք յարեւելից եկին
Յերուսաղէմ։ Եւ ասեն՝ ո՞ւր է, որ
ծնաւ արքայն Հրէից, զի տեսակ զաստղն
նորա յարեւելս, և եկաք երկիր պա-
գանել նմա։ Եւ իբրեւ լուաւ արքայ
Հերովդէս, խռովեցաւ և ամենայն Ե-
րուսաղէմ ընդ նմա։ Եւ ժողովեալ
զամենայն քահանայապետս և զԴպիրս
ժողովրդեան՝ հարցանէ ՝ի նոցանէ, թէ
ո՞ւր ծնանիցի Քրիստոս։

Եւ նոքա ասեն ցնա ՝ի Բեթլէհէմ
Հրէաստանի. զի այսպէս գրեալ է ՝ի
ձեռն Մարգարէին։ Եւ դու Բեթլէ-
հէմ երկիր Յուդայ, և այն որ զկնի։
Մաթ. Բ. 1–5։

Ըստ այսմ և ՝ի Ղուկասու ՝ի գլուխ
Բ. հմ. 3–7. ուր ասէ. “Եւ երթա-
յին ամենեքեան մտանել յաշխարհա-
գիր յիւրաքանչիւր քաղաքի։ Ել եւ

Յովսէփ 'ի Գալիլիէ 'ի քաղաքէն Նազարեթէ 'ի Հրէաստան 'ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթլեհէմ։ Վասն լինելոյ նորա 'ի տանէ և յազգէ Դաւթի։ Մատանել յաշխարհագիր Մարիամաւ հանդերձ, որ խոսեցեալն էր նմա, և էր յղի։ Եւ եղեւ 'ի հասանիլ նորա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա։ Եւ ծնաւ զՈրդին իւր անդրանիկ»։

Հ. Եւ զի՞նչ է մարգարէութիւն Անգեայ վասն Քրիստոսի։

Պ. Ի Գլուխ Բ. հմ. 6–9. ասէ, «Եւ բանն՝ որ ուխտեցի ընդ ձեզ յելանելն յերկրէն Եգիպտացւոց, և հոգի իմ որ կայ 'ի միջի ձերում քաջալերացարուք։ Զի այսպէս ասէ Տէր Ամենակալ. դարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր, և զծով եւ զցամաք։ Եւ միւսանգամ շարժեցից զամենայն ազգս, և եկեսցէ ընտիր ընտիր յամենայն ազգաց, և լցուցից զԸնառունդ զայդ փառաւք, ասէ Տէր Ամենակալ։ «Իմ է արծաթ, և իմ է ոսկի ասէ Տէր Ամենակալ»։

Ըստ այսմ է և մարգարէութիւն

Մաղաքեայ, որ 'ի գլուխ Գ. հմ. 1. ասէ. «Ահա ես առաքեմ զՀրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ, և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար ինքնին Տէրն, զոր դուք խնդրէք. և Հրեշտակն ուխտին, զոր դուք կամիք, ահաւասիկ գայ ասէ Տէր Ամենակալ։ Յայսմ Հրեշտակ ուխտին, զոր առաքելոց էր Տէր, և զոր Հրեայք և հեթանոսք խնդրէին և զոր կամէին, էր Մեսիայն ըստ ուխտի Նախահարց իւրեանց Աբրահամու, Իսահակայ եւ Յակովբու»։

Եւ Հրեշտակն՝ զորմէ ասէ, «Տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ, է սուրբն Յովհաննէս Մկրտիչ կարապետ Քրիստոսի 'ի պատրաստել զճանապարհ նորա»։

Հ. Եւ զի՞նչ է Մարգարէութիւն Զաքարիայ վասն Քրիստոսի։

Պ. Սա 'ի Մարգարէութեան իւրում 'ի զանազան տեղիս խոսի զայնպիսիս, որք յայտնապէս վերաբերին առ Քրիստոս, զոր օրինակ.

Նախ՝ 'ի գլուխ Զ. հմ. 12–15.

ասէ. «Եւ ասասցես ցնա, այսպէս ա-
ռէ Տէր Ամենակալ. Ահա այր և ծա-
գումն անուն նորա, և 'ի ներքոյ իւրմէ
ծագեսցէ, և շինեսցէ զտուն Տեառն։
Եւ նա առցէ զքաջութիւն. նստցի և
տիրեսցէ 'ի վերայ աթոռոյ իւրոյ, և
եղիցի քահանայն ընդ աջմէ նորա. և
խորհուրդ խաղաղութեան 'ի մէջ եր-
կոցունց։ Եւ պակդ եղիցի այնոցիկ,
որք ակն ունին և պիտանեաց նորա և
որոց ճանաչեն զնա. և 'ի շնորհս որդ-
ւոյ Սոփոնեայ, և յերգս տան Տեառն։
Եւ հետ աւուրք 'ի նոցանէ եկեսցեն
և շինեսցեն զտուն Տեառն. և ծանի-
ջիք, թէ Տէր Ամենակալ առաքեաց
զիս առ ձեզ, և եղիցի եթէ լսելով լը-
սիցէք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ»։

Երկրորդ՝ գուշակէ նա զգալուստ
Քրիստոսի Յերուսաղէմ իբրեւ զթա-
գաւոր նորա. ըստ այնմ թէ. «Ու-
րախ լեր յոյժ դուստր Սիօնի, քարո-
զեա դուստր Երուսաղէմի. ահա թա-
գաւոր քո գայ առ քեզ, արդար եւ
Փրկիչ. նոյն հեզ, հեծեալ 'ի վերայ ի-
շոյ և յաւանակի նորոյ»։ Թ. 9։

Եւ այս է, որ գրի 'ի Մատթէոս 'ի
գլուխ ԻԱ. հմ. 4. թէ, «Բայց այս
ամենայն եղեւ, զի լցցի բան Մարգա-
րէին։ Ասացէք, դստեր Սիօնի, ահա
թագաւոր քո գայ առ քեզ, հեծեալ
յեշ և յաւանակ իշոյ»։

Եւ 'ի Յովհաննու 'ի գլուխ ԺԲ.
հմ. 15. ասէ, «Մի երկնչիր դուստր
Սիօնի, ահաւադիկ թագաւոր քո գայ
նստեալ 'ի վերայ աւանակի իշոյ»։

Երրորդ՝ մարգարէանայ սա զթա-
գաւորն Քրիստոսի զմեղս մարդկան, ըստ
այնմ թէ. «Յաւուր յայնմիկ եղիցի
ամենայն տեղիս բացեալ տուն Դաւթի
'ի փոխոխումն և 'ի սրսկումն։ Եւ ե-
ղիցի յաւուր յայնմիկ բարձցէ Տէր
զանուանս կռոց յերկրէ, և ոչ եւս ե-
ղիցի յիշատակ նոցա, և զտուտ մար-
գարէան եւ զոյսս պիղծս բարձցէ
յերկրէ»։ ԺԳ. 1, 2։

Չորրորդ՝ նախաձայնէ սա նաև ըղ-
ձարձարանաց Տեառն և զթողութիւն զնա
յաշակերտացն և փախչելոն, ըստ այնմ
թէ. «Զարթիր սուր 'ի վերայ հովուի
իմոյ, և 'ի վերայ առն ընկերի նորա,

ասէ Տէր Ամենակալ. Հարից զՀովիւն և ցրուեսցին խաշինքն, և դարձուցից զձեռս 'ի վերայ հովուաց »։ ԺԳ. 7։

Այսմ վկայէ և Աւետարանն սուրբ, զի 'ի ժամ մատնութեան Տեառն թողին զնա աշակերտքն և փախեան, ըստ այնմ թէ. « Այլ այս ամենայն եղեւ զի լցցի Գիրքն Մարգարէիցն. յայնժամ աշակերտքն թողին ամենեքեան և փախեան »։ Մաթ. ԻԶ. 56։

Հինգերորդ՝ նախաձայնէ սա և վասն վաճառման Քրիստոսի երեսուն արծաթի, ըստ այնմ թէ. « Եւ ծանիցեն Քանանացիքն զխաշինս պահեստի իմոյ՝ զի բան Տեառն է։ Եւ ասացի ցնոսա, թէ բարւոք թուի յաչս ձեր, տուք զվարձ իմ, ապա թէ ոչ զդադար արարէք։ Եւ կշռեցին զվարձ իմ երեսուն արծաթի, և ասէ ցիս Տէր, արկ դու զայդ 'ի բովս, և քննեա, թէ փորձ իցէ, որպէս և ես գտայ վարձ վասն նոցա, և առի զերեսուն արծաթն և արկի 'ի տուն Տեառն 'ի բովս »։ ԺԱ. 11—13։

Ըստ այսմ է, որ գրի 'ի Մատթէոս

զԼ. Իէ. 9, 10. ուր ասէ. « Յայնժամ լցաւ որ ասացաւ 'ի ձեռն Երեմիայ մարգարէին, առին զերեսուն արծաթի զգին վաճառելոյ, զոր առին յորդւոցն Իսրայէլի. և ետուն զնա յագարակն բրտի. որպէս հրամայեաց ինձ Տէր »։

Վեցերորդ՝ նախաձայնեալ է սա և զՀեղուն Քրիստոսի զՀոգին Սուրբ 'ի վերայ բնակչացն Երուսաղէմի, եւ զկոծելն բաղմաց 'ի վերայ նորա, ըստ այնմ թէ. « Եւ հեղից 'ի վերայ տանն Դաւթի, և 'ի վերայ բնակչաց Երուսաղէմի հոգի շնորհաց և գիտութեան։ Եւ հայեսցին առ իս փոխանակ կաքաւելոյն, և կոծեսցին 'ի վերայ նորա կոծ իբրեւ 'ի վերայ սիրելւոյն, և աշխարեսցեն աշխար իբրեւ 'ի վերայ անդրանկան »։ ԺԲ. 10։

Զկատարումն սոյն մարգարէութեան գրեալ է 'ի Գործս Առաքելոց 'ի գլուխ Բ. հմ. 33—38. ըստ այնմ թէ. « Հոգւոյն Սրբոյ ընկալեալ 'ի Հօրէ սփռեաց զայս, զոր դուք իսկ տեսանէք և լսէք։ Արդ՝ ճշմարտիւ գիտաց

ցէ ամենայն տունդ Իսրայէլի, զի Տէր
զնա և օծեալ Աստուած արար զայն
Յիսուս, զոր դուք խաչեցիք։ Եւ լը-
սեալ զայս զրգացան 'ի սիրտս իւրեանց,
և ասեն ցՊետրոս և ցայլ Առաքեալսն.
զի՞նչ գործեսցուք, ա՛ղբք եղբարք։ Ասէ
ցնոսա Պետրոս ապաշխարեցէք, եւ
մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ
յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի 'ի
թողութիւն մեղաց. և ընկալջիք զա-
ւետիսն Հոգւոյն Սրբոյ »։

Եւ 'ի Ղուկասու գրի, «Եւ երթայր
զհետ նորա բազմութիւն ժողովրդեան
և կանանց, որք կոծէին և աշխարէին
զնա »։ ԻԴ. 27։

Հ. Յետ սակայ քո զկարգ յոգնա-
թիւ մարգարէից յաղագէ Եբրայեցւոց
խօսեցեալ զգալստենէ և զնշանաւոր
հանգամանաց անձին Քրիստոսի, զնք
և յօտար ազգաց կանխասայ զք զՔրիս-
տոսէ։

Պ. Այ՛ն են երկու նշանաւոր ան-
ձինք, որք ոչ էին յաղագէ Եբրայեցւոց.
այլ կանխաձայնեալ են զայնպիսիս, որք
վերաբերին առ Քրիստոս. և այս երկու

անձինք էին Բաղաամ և Յովք։

Հ. Զի՞նչ էր նախագուշակութիւն
Բաղաամայ վասն Քրիստոսի։

Պ. Ծագեսցի ասէ աստղ Յակովբայ,
և յարիցէ այր Իսրայէլէ, և հարցէ
զկնչխանս Մովաբայ. և առնէ զա-
ւար զամենայն որդիս Սեթայ։ Եւ յա-
րիցէ այր 'ի Յակովբայ, եւ կորուսցէ
զապրեալսն 'ի քաղաքէ անտի։ Թ՚՚՚
ԻԴ. 17, 18։

Այսմ վկայէ Յայտնութիւն Յով-
հաննու, զի Քրիստոս կոչի ասաղ ա-
ռաւօտեան ծագեալ յաղագէ Յակով-
բայ. և հարցէ զթշնամիս եկեղեցւոյ,
առցէ զՀեթանոսս 'ի ժողովուրդ իւր,
եւ թագաւորեսցէ յաւիտեան. ըստ
այնմ թէ. «Ես Յիսուս առաքեցի զզ-
հրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղե-
ցեացդ. ես եմ յարմատոյ և 'ի Սեթէ
Դաւթի, և աստղ պայծառ առաւօ-
տուս »։ ԻԲ. 16։

Ըստ այսմ է և Սաղմոս Դաւթի,
որ 'ի գլուխս Բ. հմ. 6–9. ասէ. «Ես
կացի թագաւոր 'ի նմանէ 'ի վերայ
լերինն Սիոնի սրբոյ նորա 'ի պատմել

զՀրամանն Տեառն։ Տէր ասաց ցիս որ-
դի իմ ես դու, և ես այսօր ծնայ ըզ-
քեզ։ Խնդրեա՛ յինէն և տաց քեզ
զՀեթանոսս 'ի ժառանգութիւն, եւ
յիշխանութիւն քեզ ընդ ամենայն
ծագս երկրի։ Հովուեսցես զնոսա գա-
ւազանաւ երկաթեաւ, որպէս զանօթ
բրտի փշրեսցես զնոսա »։

Հ. Եւ զի՞նչ էր նշանաւոր յայտ-
նութիւն Յովբայ վասն Քրիստոսի։

Պ. Զի 'ի գլուխ ԳԹ. հմ. 25_27.
ասէ. « Քանզի գիտեմ, զի մշանչենա-
ւոր է, որ լուծանելոյն է զիս յերկրի
յարուցանել։ Զմարթ իմ որ կրեաց
զայս ամենայն, 'ի Տեառնէ վճարեցաւ
ինձ այս։ Զոր ես անձին իմում երա-
գէա եմ, զոր ակն իմ ետես և ոչ այլ
ոք. ամենայն ինչ վախճանեցաւ 'ի ծոց
իմ »։

Հ. Ե՞րբ կատարեսցի այս նախա-
սացութիւն Յովբայ։

Պ. Յորժամ Քրիստոս Փրկիչն մեր
եկեսցէ յերկնից ամպոք և Հրեշտակօք
յարուցանել զմեռեալս, դատել զաշ-
խարհ եւ յաղթել թշնամեաց. յայն-

ժամ որդիքն Աստուծոյ յարուցեալ
մարմնովն տեսցեն զԱստուած զՔրիս-
տոս Փրկիչն մեր Էմմանուէլ, որ է ընդ
մեզ Աստուած յայտնեալ 'ի մարմնի։

Ըստ այսմ է և 'ի Թեսաղոնիկեցւոց
'ի գլուխ Դ. հմ. 15, 16. ուր գրի.
« Զի ինքն Տէր հրամանաւ և 'ի ձայն
Հրեշտակապետին և 'ի փող Աստուծոյ
իջանէ յերկնից, և մեռեալքն 'ի Քրիս-
տոս յարիցեն յառաջագոյն։ Ապա և
մեք՝ որ կենդանեայն մնացեալ եմք, նո-
քօքն հանդերձ յափշտակիցուք ամ-
պովք ընդառաջ Տեառն յօդս. և այն-
պէս յամենայն ժամ ընդ Տեառն լինի-
ցիմք »։

Եւ յառաջին Կորնթացիսն ասէ.
« Եւ ապա կատարած, յորժամ տացէ
'ի ձեռս զթագաւորութիւն Աստուծոյ
և Հօր. յորժամ խափանեսցէ զամենայն
իշխանութիւն եւ զամենայն պետու-
թիւն և զօրութիւն։ Զի պարտ է նը-
մա թագաւորել, մինչեւ դիցէ զամե-
նայն թշնամիս 'ի ներքոյ ոտից իւրոց։
Յետին թշնամին խափանի մահ. և զա-
մենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ

ստից նորա »։ Ժ. 24_26։

Եւ եւս 'ի Տիմոթէոսի ասէ, « Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ Հոգւով, յայտնեցաւ Հրեշտակաց, քարոզեցաւ 'ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ աշխարհի, և վերացաւ յերկինս »։ Գ. 16։

Զնոյն է տեսանել և յայս պանծալի բան Լամբրոնացւոյն յասելն նորա վասն Քրիստոսի Տեառն մերոյ. « Եւ այն որ էջ 'ի մեռեալս՝ և ազատեաց զնոսա. եկն առ կենդանիս և մխիթարեաց զնոսա։ Պարտ էր զի ընծայեսցէ այնուհետեւ զպատարագն զոր առ յերկրի՝ այնմ, որ հաճեցաւ ընդ նուիրելն նորա։ Պարտ էր, զի 'ի ձեռն որ ստեղծ զմարդն անապական, դիցէ զնոյն նորոգեալ ըստ առաջին վայելչութեան։ Պարտ էր, զի արքային՝ ահարկու եւ լեալ թշնամեացն յաղթեաց, վիճակեսցի նստիլ ընդաջմէ Հօր յաթոռ քահանայապետ յաւիտենից, և բարեխօս նմին քաւութեան։ Պարտ էր առ հաւատչէի յուսոյն մտանել 'ի յերկինս, որպէս զի մարդիկ 'ի նոյն խարսխեալ 'ի նոյն փութացին օթեւանս։ Պարտ էր, զի որոյ շրջմամբ 'ի մէջ օձից և կարճաց, եւ մահացու թունիւքն խոցիմք. լցցի արեամբն իւրով սրբիչ, և մեծի շնորհաց Հոգւոյն ընձեռիչ »։

Ի Ձառն Համբարձման։

Հ. Որպիսի կարեւորագոյն եւ յայտնի ճշմարտութիւնս կարեմք իմաստասիրել յայս երկարաձիգ կարգէ մարգարէութեանց վերաբերեալ առ Քրիստոս Փրկիչն մեր։

Պ. Արդէն յայտ է 'ի Սուրբ Գրոց, զի 'ի սկզբանէ աշխարհի՝ յորմէ հետէ մեղք և անկումն Ադամայ կալաւ զամենայն սերունդս նորա. և ազգ մարդկան եղեւ անիծեալ յԱստուծոյ. եւ յօրէ անտի իսկ սկսաւ շարունակ յաջորդութիւն մարգարէից տուեալ Աստուծոյ զգուշակումն խոստման իւրոյ, որ խոստացեալ էր առաքել զմեծահրաշ և մեծազօր փրկիչ մի, որ յայտնելոց էր յաշխարհի 'ի լման ժամանակին իբրեւ թագաւոր Իսրայէլի և փրկիչ Հրէից և Հեթանոսաց. վասն որոյ

'ի դարս դարս ակնկալեալ լինէր նա յայնց բարեպաշտ և սուրբ արանց, որք ըստ կարի քաջածանօթ էին Սուրբ Գրոց. մանաւանդ 'ի դարուն՝ յորում երեւեցաւ Քրիստոս։ Ըստ այնմ թէ. "Եւ յարոյց զեղջուր փրկութեան 'ի մեզ 'ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ։ Որպէս խօսեցաւ բերանով սրբոցն, որք յաւիտենից մարգարէք նորա էին"։ Ղ.-ի. Ա. 69, 70։

Եւ 'ի Գործս Առաքելոց 'ի գլուխ Գ. հմ. 18-21. ասէ. "Այլ Աստուած, որպէս յառաջագոյն պատմեաց 'ի բերանոյ ամենայն Մարգարէից զչարչարիլն Քրիստոսի իւրոյ. նոյնպէս և կատարեաց։ Արդ՝ ապաշխարեցէք եւ դարձարուք 'ի ջնջել զմեղս ձեր. որպէս զի եկեսցեն ժամանակք հանգըստեան Տեառն. և առաքեսցէ զյառաջագոյն ընկատեալն ձեր զՅիսուս Քրիստոս։ Զի պարտ է յերկնից ընդունել. մինչեւ 'ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ, զորոց խօսեցաւ Աստուած 'ի բերանոյ սրբոց իւրոց Մարգարէից։

Հ. Բայց այս կոչեցեալն Քրիստոս որդի կուսին Մարիամու էր խոստացեալ նոյն գերահրաշ և մեծաղօր անձն, զոր ըստ Հրէայք եւ Հեթանոսք ըստ խոստման Աստուծոյ ակնկալէին միշտ։

Պ. Այս, նոյն ինքն էր խոստացեալն Քրիստոս. քանզի այն ամենայն մարգարէութիւնք, որք 'ի վեր այսր գրեցան վերաբերեալ առ Մեսիայն կամ օծեալն յԱստուծոյ, այնք ամենայն ըստ վկայելոյ Աւետարանչացն կատարեցան 'ի Քրիստոս առանց նշանախեց մի անկանելոյ յօրինաց եւ 'ի մարգարէիցն. վասն որոյ ոչ մնայ մեզ երբէք տեղի ինչ երկբայութեան, թէ այս Քրիստոս Նազովրացի որդի Մարիամու, զորմէ մինչեւ ցայս վայր գրեցաւ, է նոյն ինքն խոստացեալն 'ի սկզբանէ աշխարհի Քրիստոս Փրկիչն ազգի մարդկան և Գառն Աստուծոյ, որ եկն բառնալ զմեղս աշխարհի. վասն որոյ "Որ հաւատայ 'ի նա, ոչ դատապարտեսցի. և որ ոչ հաւատայ 'ի նա, արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատայ յանուն Միածին որ-

գ.ոյն Աստուծոյ »։ Յովհ. Գ. 18։

Հ. Արդ՝ 'ի վերայ այսր ուրեք ուրեք 'ի պատասխանիս հարցման իմոյ բերէիր դու զվկայութիւն Աւետարանչացն, բայց ցանկալի է ինձ գիտել, եթէ իրաւապէս գրողք Նոր Կտակարանաց նոյն չորեսին Աւետարանիչքն էին, այսինքն Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս՝ աշակերտք Քրիստոսի։ Քանզի հեղինակ Դախրաւ գրքոջ յօրինեալ 'ի Հոլանդա, և այլք ոմանք համարձակին ասել, թէ Նոր Կտակարանն յայլոց հնարեալ իցէ, և ոչ յականատես Առաքելոց գրեալ. և այն թէ յետ դարաւոր ամաց զկնի համբառնալոյն Փրկչին մերոյ, որով և ոչ հաւատան յայնչափ հրաշագործութիւնսն Քրիստոսի կատարեալ 'ի ժողովուրդսն Հրէից։

Պ. Այդ ի ցնորք բանդագուշանաց, և ոչ մի ինչ հաւանութիւն յարդեանց իրացն, քանզի ընդ ամենայն երկիր վկայեն թէ, Աւետարանն Մատթէոսի նա ինքն գրեաց Յերուսաղէմ քաղաքի 'ի լեզու Եբրայեցի, զկնի

ութ ամի համբառնալոյ Փրկչին 'ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղէմի։

Աւետարանն Մարկոսի, նա ինքն Մարկոս հրամանաւ Պետրոսի վիմի գրեաց յԱղէքսանդր քաղաքի 'ի լեզու Եգիպտացի զկնի 15 ամի համբառնալոյ Փրկչին։

Աւետարանն Ղուկասու, նա ինքն գրեաց հրամանաւ Պօղոսի յԱնտիոք քաղաքի 'ի լեզու Ասորի, նոյնպէս ըզկնի 15 ամի համբառնալոյ Փրկչին։

Եւ Աւետարանն Յովհաննու, նա ինքն Յովհաննէս սիրելի աշակերտ Քրիստոսի գրեաց զկնի 53 ամի համբառնալոյ Փրկչին յԵփեսոս քաղաքի 'ի խնդրոյ եկեղեցւոյն Ասեայ 'ի լեզու Յոյն։

Այսմ վկայէ և սրբազան Պօսուէ եպիսկոպոսն յասելն նորա թէ. « Նոյնպէս և ճշմարտութիւն չորից Աւետարանչաց վկայ անհակառակելի արձանացեալ կան քրիստոնեայք, հեթանոսք եւ հերետիկոսք։ Միահամուռ ամենայն ազգ և ալինք՝ որք ընկալան զգիրսն, և երագ երագ յեղին 'ի բաղ

մաձայն լեղուս , ոչ ինչ երկմտեցին վասն ժամանակին կամ վասն արանցն զոր գրեցին ։

Այսոցիկ չետուն ընդդէմ բանս և հեթանոսք . չեկաց հակառակ և կելոսս , այն որ անդստին 'ի սկզբանէ մարտեաւ ընդդէմ աստուածեղէն գրոց ։ Զասաց ինչ և ամպարիշտն Յուլիանոս՝ որ տեղեկագոյն էր ամենայնի և հետազօտեաց զամենայն , որովք հնար ինչ էր նշաւակել զնոսա ։ Նաև բնաւ այլ ոք 'ի հեթանոսաց ոչ խիթաց երբէք ընդ այնս . այլ ամենեքին միաբան՝ որոց ընծայէին քրիստոնեայքն զնոսա ասացին յօրինողս գրոցն ։

Ըստ նմին և հերեսիովքք՝ թէպէտ և տագնապէին 'ի բանից Աւետարանին , չը համարձակեցան ասել թէ այլոց ուրուք շարագրածք իցեն և ոչ աշակերտացն Քրիստոսի ։ Նա աւանիկ ոչ սակաւք 'ի նոցանէ ականատես էին եղելոցն . և որոց յանդիման իսկ գրեցան Աւետարանքն . վասն որոց եթէ հնար ինչ էր նենգութեան 'ի ներքս անկանել , հուպ ընդ հուպ նշաւակէր .

և անմարթ էր յաջողել այնմ» ։ Վէսպք ազգաց . Բ . հատոր . երես 203 , 204 ։

« Մարգարէ յարուցեալ նոցա յերկրէ բարց իւրեանց իբրեւ զքեզ . և տայ զպատգամս իմ 'ի բերան նորա , եւ խօսեսցի ընդ նոսա , որպէս և պատուիրեցեալ նմա ։ Եւ մարդ՝ որ ոչ լուիցէ . զոր խօսիցի Մարգարէն յանուն իմ . ես խնդրեցեալ վրէժ 'ի նմանէ » ։ Ի գիր Օրինաց ԺԸ . 18 , 19 ։ Որ ունի ականջս լսելոյ լուիցէ ։

1448
<< Ազգային գրադարան
NL0268288

1448
4

1406